

ՅՈՎՀԵՆՆԵՍ ԼԵԳԼԵՊԻՑԵԱՆ

(Ա. Բ Ռ Ի Կ)

ՀԱՀ-1712

ՊՍԱԿԻ ՏԱԿԻՑ

= ԳԵՐԵԶՄԱՆՈՑ =

Չ Ե Պ

Տաճկահայերի կեանքից

ИЗЪ ПОДЪ ВѢНЦА
КЛАДБИЩЕ

повѣсть
Юаннеса Леблебиджяна
(АРЦИВЪ)

891.99
չ-39

ԲԱԿՈՒ * БАКУ
Երեբան տպարան «ԱՐԱՄԱԶԴԻ» Փ Էլեկտրո-Տիպ. «ԱՐԱՄԱԶԴЪ»

АРМ.
2-1432а

2-1432а

Армия
NOV 2018

804

ՅԱՎՀԵՄՆԵՒՅ ԼԵՊԼԵՊԻՋԵԸ

(Ա. Պ Շ Ի Կ)

891.99

L-39

ՊՍԱԿԻ ՏԱԿԻՑ

= ԳԵՐԵԶՄԱՆՈՑ =

Չ Ե Պ

Տաճկահայերի կեանքից

ИЗЪ ПОДЪ ВЪНЦА

КЛАДБИЩЕ

повѣсть

Іоаннеса Леблебиджяна

(АРЦИВ'Е)

ЛНВ. № 20506

Б А К У

Электро-Типографія „Арамаздъ“

1915

53294

Дозволено цензурою 1915 г.



40667-63

Եռեր ղիւցազն Հայդուկներին

Իմ անդրանիկ աշխատանիս Ձեզ եմ նույրում, Ձեզ՝
պարծանիք եւ ապագայ վառքի մարտիկներիդ:

Դու՛ք, իտեալի անձնուեր հերոսնե՛ր, անարգելով
կեանիք զանազան հանոյիները, անեղ մարտակոչի առա-
ջին խոկ նրաւերին արձագանք տուիք, Ձեր անման նախ-
նիքներից ժառանգած ռազմիկ դիմացնուրեան վսեմ ոգ-
ուով կազմ, զինուած, պատրաստուած՝ ցուրտ, ոստնամա-
նիք օրերին նետուեցիք բարձրաբերա սարերի կատարելոր՝
մեր դարաւոր թշնամուց արիւնոս հայրենիքը փրկելու:

Անմանն Քաջն Վարդանենրու, դիմացն Յովնան-
ներու արիւնանոս կոլիւների ներոսուրեանց վառքը եր-
գող վիրաւոր պլայսլին, այսոր Հայաստանի լեռները բըն-
դացնող Ձեր պատեհի զենքերի զուուն զոշինը, աւետին
է տալիս, որ ննջում է ժամք փրկուրեան:

Դու՛ք, անկառան իտեալի ազնիւ հերոսնե՛ր, որ
հայուն ինինատուր վսեմ անձնուիրեամբ, զինում եք
Ձեր կեանիք՝ բնակալուրեան շրաները փերելով տպա-
տուրին աւետելու բուրքի լուծի տակ հեծող հայուրեան՝
Ձեր վառքը անման է եւ անման պիտի յիշուի դար-
դար:

Ձեր անձնուրաց զործունեւուրեան խնկարկու օրի-
նակը, բո՞դ ապագայ սերնդին կրրիչ գրաւականը մնայ:

Թէալէտեւ իմ այս անդրանիկ աշխատուրեանս մէջ
զուցե պակասի զեղարուեսր, գրական հմտութիւնը, բայց

զգացմանքը՝ երբեք. իմ թոյլ, տկար գրչովս աշխատած եւ պանդիստորեան դաժան կեանքի խսկուրիւնը պարզել . . եւ բո՞ղ ներուի ինձ՝ երեք ազատորեան միակ նա-նապատճիլ Չեզ նման անձնուեր բազերի առաջնորդու-րեամբ եւ ժողովրդի ուժեղ մասնակցուրեամբ նայենիքը հիմքից բարենորդելու մեջ եմ գտած:

Նուիրելով անդրանիկ աշխատորիւնս Չեր ոսկե-դար յիշատակը յաւերմացնելու, մնամ միւս

Չեր անկաշառ իսեալի
յունարի ծառայ

ՀԵՂԻՆԱԿ:

ԽԱՐԿՈՎ, 1915 թ.

ՍԻՐԱՀԱՐՆԵՐԸ



1900 թւականին էր: Սկ, մաւթ մառախլա-
պատ գիշեր մ'էր: Գիշեր մը՝ որ իրաւ սարսուե-
ցուցիչ, զարհուրելի ազդեցութեամբը, կարծես,
գուշակել էր տալիս մի ինչ որ վատ . . . տան-
տանջալից խորհուրդ:

Թ. գիւղի լերան լանջում, աղբիւրի պլալա-
կի քիչ վերեւում, հսկայ, դարաւոր կաղնիի մը
կշտին, գիւղական գեղջկուհի Աննիկը, կէս թագ-
նուած, անհամբեր հայեացքով սպասում էր իրա
սիրելի Աշոտին: Չէր գիտել պատճառը, թէ ին-
չու համար ինդրուած էր այս երեկոյ անպատ-
ճառ իրան սպասել . . . ուխտավայր կաղնիին
մօտ, այն տեսակ պաղատագին դէմքով ու նայ-
ուածքը սովորականից այնքան տարբեր, որ հո-
գեպէս տանջւում էր. չըլլայ թէ հայրը արգելք
հանդիսացած ըլլայ մեր սիրոյն: Սակայն չէ
որ Աշոտը ինքն էր, որ ըսաւ, թէ հայրս յօժարաւ,
մայրս նոյնպէս, այլևս ովկ կարող է մեր սիրոյն
արգելք հանդիսանալ . . ովկ կարող է մեզ իրար-

մէ բաժնել . . ովք: Սոյնանման մտածմունքների մէջ էր խորասուզուած, երբ աջ կողմից տերեներու փոքր շշուկ մը լսուեց՝ ուրկէ մի ինչ որ սև նշան դէպի իր կողմն էր դալիս է իմ արել . . իմ անգինը:

— Շատոնց է սպասում ես, հոգիս, արդէն մօտեցած, հարցուց Աշոտը:

— Ինչպէս չ'սպասէի, իմ արեւ, իմ կեանք, երբ դեռ քո պաղատալից ձայնի արձագանքը դեռ այսօրուայ թախծոտ և մելամաղձ հայեացքիդ վէրքը սրտումս է, օդը մինչև իսկ չեւ տեմում որքան մոայլ է ու խաւար, կարծես, սրտի զգացումներուս ուզում է համապատասխանել ինեղուկ . . . տանջալից:

Աշոտը առաջին անգամից ոչինչ չ'կարողացաւ պատասխանել: Աշերը յառած սիրականի տիրամած դէմքին՝ զիտում էր. չէ՞ ուզում խորհրդաւոր, խաղաղ լոռութիւնը վրդովել, ուր՝ լըսում էր աղքիւրի կլկլոցի ձայնը միապաղաղ՝ իրա հոգեատանջ զգացումներու արցունքի փոխանչ՝ Հոգիս, սիրում եմ քեզ անկեղծ, երիտասարդական մաքուր սիրով և քո սիրոյ բոցը իմ մէջս անմար է ու պիտի վասի, բոնկի մինչև որ, . . . ալեկոծ ձայնով մը կրկնեց պիրաջապէս, մինչև որ . . . :

— Մինչև որ ինչ . . . յանկարծակիի եկածք այլայլուած ձայնով մը, հարցուց Անսիկը:

— Այո՛, մինչև որ, քո սիրոյ պտուղը վայելելու արժանանամ, հաստատ ձայնով մը շեշտեց Աշոտը:

— Զէ՞ որ պիտի նշանուինք, վերջը պսակ, հարամնիք, հազիւ լսելի ձայնով ըստ Անսիկը:

— Այո՛, բայց . . .

— Ի՞նչ:

Տիրեց գարձեալ լոռութիւն և պատասխանը եղաւ հոգեկան պրկատանջ զգացումներու ամփոփման կայլակը՝ Աշոտի թախծոտ աչերում:

— Բայց . . դաժան կեանքի հարուածը մեզ ալ ստիպում է մօտ ժամանակի համար, հեռանալ հայրենիքից . . պապենական կտուրից և քեզնից: Պանդխտութեան ցուպը ձեռք առած գնալ . . գնալ . . . մօտիցդ հեռանալ, քեզ փնտուել . . . հազիւ լսելի, դողոզ ձայնով մը շարունակեց Աշոտը:

Քարացած, ոչ մի խօսք չ'հասկացողի մը նման ապշացածնայում էր Անսիկը. «Գնալ, զընալ . . մօտիցդ հեռանալ, քեզ փնտուել» կրկնում էր ինքնամոռաց, կէս խելագար: Զուզեմ մի զընար, եկ մօտս . . . արի, կ'ուզեմ քեզ հետ ապշիւ, միասին լալ, երգել . . . տանջանքի ճիշաններից փրկուողի մը նման բղաւեց և պինդ մը Աշոտի գլուխը հեշտակուռ կրծքին սեղմած, առաջին համբոյըն էր որ յանդնում էր, իր սիրած սիրահարին ճակտին դրոշմել և այդպէս

զլուիլ կրծքում սեղմած՝ մի քանի վայրկեանքարէ արձաններու նման լուած էին . . գիրկընդխառն, մտախոհ:

Ո՞վ գիտէ գեռ որչափ ժամանակ կ'մնային այդ զրութեան մէջ, եթէ Աննիկի սրտամաշ կսկիծի կայլակը մարդարիտներու նման շարպն, շարան չի չնային Աշոտի դէմքին, որ լսում էր Աննիկի հոգւոյ մթութեան խորերի պաղատանքը. «մի գընար, չուզեմ, եկ մօտս»:

Մի տարիից անպատճառ կ'վերադառնամ, մտածում էր Աշոտը պատկերացներով իր ապագայ կեանքը իրա բոլոր երջանկութեամբ: Հարուստ կվերադառնամ կամուսնանամ, զաւակներ կունենամ, շատերը կնախանձին վրաս . . ծնողք կերջանկացնեմ այլս բաժանում չըլլար . . կապրիմ գոհ, ուրախ և գեռ ինչեր ինչեր. այս երազած կեանքի նախանձելի երջանկութենէն արբշիո՛ կէս պաղատագին և կէս պահանջկուտայնով մը ըստաւ.—Այն, Աննիկ, մի տարիից անպատճառ կվերադառնամ, ոչ լայնածաւալ ովկիանոսները, ոչ վիթխարի լեռները կարող են արդեկք հանդիսանալ վերադարձիւ: Եւ թող սա հինաւուրց կաղնիի նայուածքը, թող աղբիւրի կըլլոցի միապաղաղ մեղեղին, թող բնութեան ամայութիւնը և գիշերուայ խորհրդաւոր լուսութիւնը վկայ ըլլան իմ խոստմանս: Միայն աղերսում եմ պաղատառմ՝ քո կամքը, համաձայնութիւնը առ-

նել որպէս զի ուժ առնեմ, կամք, կորով և խանդ:

— Բոլոր պանդխտութեան, օտարութեան զընացողները այդ ոսկի խոստումներով են մեկնում . . զնալիս . . . զնում և մոռանում են . . եթէ գու ալ մոռնամս, ոհ, Աստուած իմ, գետինը թող պատոի ինձ, կուլ տայ, անյայտանամ աշխարհի երեսից, քան թէ իմանամ, թէ գու ինձ մոռցեր ես, մոռցեր . . հեծկլտալով ընդմիջեց՝ Աննիկը:

— Կարո՞ղ եմ միթէ առանց քեզ ապրիլ, հոգիս, երբ ամբողջ աշխարհը կթուի ինձ բանտ և բոլորը, մութ կեանք: Եթէ երբէք, ես պանդխտութեան գաժան, դառնակսկիծ կեանքի հետ հաշտում եմ. լոկ, քո՞նուիրական «սէր»ը, իմ պաշտած իտէալն է, որուն տիրապետելու համար յանձն եմ առնում յակամայից, համոզելով նրան ճառում էր Աշոտը:

— Արդէն որ մեկնողը, որ հետացողը այդ համոզեցուցիչ, ինքնավտան խօսքերը չէ ասեր երբաժանման ըոպէին: Շողակաթենց աղջկան՝ Տիրուհիի սիրական Վարդօն էլ նոյն խօսքերով եւ խոստումներով էր մեկնած, ուր է, ինչու համար մինչև հիմայ չկերադարձաւ, ինչու համար վերջերս նամակ մինչև իսկ չէ գրում: Զար լեզուները խօսում են, որ հոն՝ օտար երկրում՝ անձանօթ աղջկան մը վրայ սիրահարուեր է,

այն աստիճան, որ մոռցել է թէ՛ տուն, թէ՛
հայրենիք, թէ՛ սիրական և թէ ինքն իրան, զէ,
ես չուզեմ, որ դու մեկնիս, հեռանաս . . . վա-
խենում, սոսկում եմ, չըլայ թէ դուն ալ . . .
չէ, չէ հոս իմ մօտս ապրէ, եթէ ինձ սիրում ես,
եթէ կուզես որ մենք երջանիկ ըլլանք, եթէ չես
ուզեր, որ կեանքը մեզ համար մահանայ, եթէ
չես ուզեր . . . :

— իմ արեւ, ընդմիջեց Աշոտը, դու կարծում
ես, թէ ես Վարդօն եմ, դու կարծում ես, թէ
օտարի շացուցիչ փառքը, մեծանուն համբաւը,
և կամ հրապուրիչ տեսքը կարող է ինձ զրաւել,
դու կարծում ես, թէ ես կարող եմ այլիս ու-
րիշին սիրել. դու քո խօսքերովը վիրաւորում ես
ինձ, գիտես թէ ինչ է իմ սիրոյ ուժը, նա ամ-
բողջ իմ էութիւնն է, իմ կեանքը և չէ որ ես
դեռ կուզեմ ապրիլ, ապրիլ. առանց քեզ կարող
եմ միթէ կեանք ունենալ, առանց քեզ կարող
եմ միթէ գեթ վայրկեան մը երջանիկ զգալ ինձ:
Երբէք, երբէք. առ այս սիրտս, քոնն է, և
քեզ կպատկանի յաւիտեան, ես միմիայն քո սի-
րոյն տիրապետելու համար է, որ յանձն եմ առ-
նում այս բաժանումը, դու կարծում ես, թէ
ինձ համար հեշտ է բաժանուիլ քեզանից՝ հե-
ռու ապրիլ և քո ձայնը չլսել . . . բայց . . .
պէտք է համակերպիլ սև ճակատազրի զբութեան
և անողոք բաղդի հարուածին: Ի՞նչ ըրած՝ տիր-

չենք կարող միշտ տանջանքի, վշտի մէջ լողալ,
զրկանքի ու տառապանքի ծովում ապրիլ . . .
մի տարուայ բաժանում և մենք արդէն, թէ եր-
ջանիկ ենք և թէ բաղդաւոր, միայն կրկին ան-
գամ պաղատում եմ լսել քու խրախուսական
ձայնը, տեսնալ ոգեսրիչ ժպիտ մը քո դէմքին . . .
և մօտենալով, համբուրեց ձեռքը ու լսեց: Տիրեց
երկու վայրկեան խորհրդաւոր լոռութիւն: Աշոտի
խրոխտ ձայնի ոգեսրութիւնը այն աստիճան ազ-
գեցին Աննիկի վրայ, որ իր սիրած մարդու բե-
րանից այդ տեսակ միահամուռ սիրամփոփ, խան-
դակաթ խօսքերը լսելիս, հպարտացած՝ դոհու-
նակութեան ժպիտ մը դէմքին, ըսաւ.

— Ես քեզ սիրում եմ, Աշոտ, և միմիայն իմ
սիրած մարդուս հաճոյք մը պատճառելու, խըն-
դիրքը կատարելու վեհապանձ գոհունակութեամբ
իրաւունք եմ տալիս քեզ, գնա, բայց մի մոռ-
նար իսկի, որ կեանք մը, խենթ չահիլ աղջկայ
սիրտ մը այրում է, տանջում. հաս՝ հայրենի
կտուրին տակ մենակնել, անտէր, որ նա էլ քե-
զանից աւելի պաղատագին խնդրում է խօսքդ
յարգել, սէրդ չմոռնալ և անպատճառ վերագառ-
նալ . . . : Եւ նա աղերսազին շարունակելով,
չէր կարողանում զսպել արտսուքը, որ կաթում
էր մելամաղձ թախծոս աշերից:

Դիրկենդիմառն լավիս էին երկուսով:
Արշալուսեան աքաղաղի ձայնը սթափեցուց

նրանց: Օդը սկսել էր պարզուիլ, երկնքի կապոյտը բացուիլ, ուր աստղերը նշմարւում էին երեխն-երբեմն և ասդին երկու յոգնած, վշաահար սրտեր բաժանւում էին իրարմէ արտասուաթոր աչերօք, դառն և հողետանջ զգացումներու տակ ընկճուած:

Մ Ի Ա Կ Ե Լ Ք Ը

Բ

Թ. գիւղի բնակիչները մեծաւ մասամբ հոգագործներ էին, աշխատասէր, ընդունակ և շատ բարեսէր ժողովուրդ մը: Գիւղը՝ իրա ըսքանչելի ծառաստաններով, կազդուրիչ ջուրերով և հազուագիւտ գեղեցկատեսիլ դաշտերով՝ առաջն տեղն էր զրաւում, իբրև ամառանոց՝ շըրջակայ մի քանի քաղաքներու: Շէնքերը կէս եւրոպական և կէս ասիական իրանց տեսքով՝ տեղւոյն բնակչաց յառաջդիմութեան դէպի լաւին ձգտում ունենալը հաստատում էին: Յաճախ կարելի էր տեսնել երկյարկանի շէնքեր հոս հոն ծառաստանների կշտին բարձրացած:

Մ. ենց տունն ալ եկեղեցից քիչ հեռի, գիւղի ամենազեղեցիկ շէնքերից մէկն էր: Ինչպէս երկում էր հինցած շէնքերի հնա-հոն ցըցուած գեղարուեստական բեկորներից, տեղացիք:

Ժամանակի ընթացքում ունեցեր են շքեղ կեանք և համեստ, ապահով ապրուատ:

Բայց, ահա արիւնկզակ, զազիր բռնակալի՝ Ապտիւլի հայաջինջ, բարբարոս քաղաքականութեան մահահոտ, արիւնոտ հաթաղանը սկսեր է զործել . . . աւազակներու յափշտակութիւնները, վաշխառուների անտանելի տոկոսը, աներեակայելի գետավազ տուրքերը; անիծուած կառավարութեան զօրքի ապրուստը մինչկ իսկ . . . և զեռ ինչեր, ինչեր խեղզ գիւղացու զիսուն դամոկեան սուրի մը նման կախուեր են...իբրև գօշմար, իբրև հոգեառ: Այդ գրութեամբ ինչպէս կարող էր թշուառ ժողովուրդը տոկալ տարիներ, անվերջ տարիներ . . . Մի ելք, մի հնար պէտք էր և դա լոկ պանդխտութեան մէջ էին գտած: Գնում էին 5-10 ընկերներով, զնում էին և, ով զիտէ, նրանց քանիներու հէք մօրկանց վիճակուած էր կարօտեցուցիչ արտառքի հոգեմաշ կաթիլներով սպասել անդարձ վերագարձին, ճամբորգին, զարիպին: Ով զիտէ քանիներ իրանց վշտահար կեանքի բօթաբեր գուժը միայն պիտի զրկէին մաշուած, աւերակ հալրենիք, իբրև վերջին ձօն, և, ով զիտէ, ինչեր, ինչեր էին սպասում պանդուխտ զարիպներին այդ անստուգութեան, անյայտութեան թափառական կեանքում:

Բայց և այսպէս զնում էին անընդհատ շա-

բան-շարան, խումբ-խումբ, անվերջ:

Եւ սակայն, չնայելով, որ Մ. տեղւոյն ամենահարուստներից մէկն էր համարուած, կ'յարդուէր, իբրև պատուաւոր ժողովրդասէր, իր համեատ բնաւորութեամբ, բարեկամական աշալուրջ խորհուրդներով կաջակէր բարոյապէս ամեն ընդհանրական գործի, և համակրանքն ու սէրն կվայելէր՝ ոչ թէ միայն իրանց գիւղի, այլ և մօտակայ գիւղի բնակչաց, բայց որովհետեւ նա միշտ կոռուզն էր վաշխառուի դաժանութեան դէմ, որովհետեւ նա միշտ պաշտպանն էր հէք գիւղացու չարքաշ կեանքին, հետևապէս այդ անհաւասար կռւում, հոգեպէս թեպէտ արի, բայց նիւթապէս այն աստիճան ծծուած, քամուած՝ որ ստիպուած էր միակ որդին Աշոտը, պանդիտութեան զրկել, նրա յոյսով ապրիլ: «Թող գնա. Աստուած հետը, ամենը ինչ, մենք ալ ան . . . զոնէ յուսով կապրինք» մտածում էր և երբեմն կէս համոզեցուցիչ ձայնով:

— Տես, ասում էր Աշոտի մօրը, Պօղոսենց տղան ալ գնաց, դեռ 4 ամիս չկայ և որչափ օգնութիւն է անում. նոր զրկած էր մի ոսկի, մօտերս դարձեալ զրկեց, ըսել է, մեր ասլան Աշոտը՝ շատ չէ, մի տարի մնալու ըլլայ, արդէն պարտքերիս կվճարենք, ձեռքերնիս քիչ մըն ալ փող կմնայ, ապահովուած կըլլանք բաւական ժամանակ: Եթէ ոչ, սա մեր կեանքը տանելի չէ.

տոկոսը չվճարած, տուրք են պահանջում . . . տուրքը չվճարած, տոկոսը . . . : Բայց ամեն ամեն անգամն ալ մօր բողոքն էր լսում, թէ, ինչպէս կարելի է, իմ կաթով մնուցած, իմ խնամքով մեծուցած զաւակս . . . օտարութեան զրկել, հեռացնել մեզանից . . . ահա, առ իմ ունեցած զարգերս, տար ծախէ, պէտքերդ հոգա . . . տոկոսդ առւր և չուզեմ իսկի քո եղն ու մեղն, միայն իմ տղաս իմ մօտն ըլլայ, իմ աչքի առջն . . . հեծկլտալով աղաչում էր հէք կինը . . . մօր սիրաբ:

— Լաւ այս անգամ պէտքերս հոգամ, տոկոսս վճարեմ, առարկում, պատճառաբանում էր ծերուկը միշտ, սակայն չէ որ մի ամիս վերջը դարձեալ նոյն հարցը, նոյն պահանջը նոյն, դըրութիւնը. վերջը, ընկճուած ձայնով աղերսում էր մօրկանից, վերջը . . . :

— Ի՞նչ վերջ, կեանքի վերջը մահ չէ միթէ:

— Մահ, այն, բայց չէ որ մինչեւ այդ մահը ապրիլ պէտք է, ապրիլ . . . ինչով կարող ենք մենք, մեր գոյութիւնը պաշտպանել, ինչով կարող ենք մեր ծերութիւնը բաշ տալ մինչեւ մահ ինչով . . . շարժուն կայքերնիս բոլորը ծախուաւ մեր բարեխնամ ելլուրզի կառավարիչների հրամանով, մեր պապենական մնացած հողը, մեր կեանքի, զերդաստանի պահպանիչ այդ միակ յոյսը, արդար քրտինքի աշխատանքը

գրաւ է գրուած վաշխառու տղրուկի մօտ . . .
տոկոսը աճում է, վազը միւս օր, այդ ալ պիտի
գնայ մեր ձեռքէն, պիտի յափշտակեն, խլեն
անօրէնները . . այն ատեն ողջ, ողջ գերեզման
պիտի մանենք թաղուինք. Բնչ կըսես, լաւ չէ,
որ զրկենք մեր Աշոտին, գերգաստանի միակ
արևուն, գնա փող շահի և վերադառնայ, հար-
ցուց նա կրկին Աշոտի մօրը:

—Չէ, թող մենք ողջ, ողջ գերեզման մանենք
կորչինք, անհետանանք, միայն թէ Աշոտս հետս
ըլլայ, իմ աչքիս առջե . . . անլսելի ձայնով մը
պատասխանելով լալիս էր հէք կինը:

Երկուսն էլ լսեցին: Կարծես երևում էր ի-
րանց հոգեկան զգացումների թողած գէմքի տը-
պաւորութիւնից՝ որ հայրը մօրն է իրաւունք
տալիս, իսկ մայրը՝ հօրը: Այն տեսակ անելաննելի
դրութիւն մը ստեղծուած էր, որ դժուարանում
էին մի վերջական վճիռ տալ:

Թուխալ, մութ ամպերով ծածկուած արել
կամաց-կամաց դուրս էր ցցում իր կենսատու-
ճառագայթները, ազատում էր իրան սև քօղից:
Սյդ լարուած ըովէին չնկատեցին, թէ ինչպէս
արկի կենդանի նայուածքը պատուհանից ներս
մտաւ ու խայտում է օգոյ պտոյտներում. չնը-
կատեցին, թէ ինչպէս դարձեալ ծածկուեց, դարձ-
եալ ազատուաւ. ով գիտէ ինչի մասին էին մը-
տածում, ուր էին գացեր իրանց յուշերը, երես-

կայութիւնները . . .

Մեծ գիւտ մը գտածի նման, յանկարծ հի-
ամթափուած խօսեց ալեոր ծերուկը. «թողունք
Աշոտի կամքին. կուզէ կզնայ, կուզէ կմնայ, չը-
լար, խաթննա»:

40667-62


—Նա ուզում է, ասաց խեղճ կինը, որդին
մահի ճիրաններից փրկողի մը խելազար ձայնուի,
նա ուզում է, բայց, ջահիլ է, անփորձ է, խելքը
չի կտրում . . և սկսաւ հոնգուր-հոնգուր լալ՝
որդոյ ապագայ անորոշ կեանքի հեռանկարից
սարսափած:

Ալեհեր ծերուկը երբ տեսնում էր, որ այլ-
ևս անկարող է միխթարել ցաւատանչ մօրկան
զգացումները, մտախոհ դիտում էր պատուհանից
հեռաւոր անյայտութիւնը, ուր պիտի մեկնէր իր
որդին՝ Աշոտը:

ՄԵԿՆՈՒՄԸ



Արշալոյսը դեռ նոր էր սկսեր բացուել,
դեռ արկի կենսատու ճառագայթները չէին
սկսեր սփոել իրանց աղօտ լոյսը, երբ կարա-
ւան մը բեռնաւորուած խումբ մը կտրիճներով,
վերջին հրաժեշտն էր տալիս պապենական տան,
մանկութեան օրօրանին գրադարան



Տիրած էր մեռելային խոր լոռութիւն։ Եւ
այդ խորհրդաւոր լոռութիւնը խանգարող մը
չկար. ամենն իրա հոգեկան զգացումներու հետ
զբաղուած՝ կարծես չէին հաւատում, որ իսկապէս
հեռանում են՝ մեկնում, եթէ սայլի անիւների
միատեսակ ճոքուցը չ'կար յիշեցնլ, որ այս,
իսկապէս գնում են, մեկնում...»

Աշոտը, տեսակ մը թմրութիւնից, անբացա-
տրելի անորոշութիւնից սթափուածի մը նման,
դիտում էր հեռաւոր հորիզոնում հայրենի կապոյտ
կամարը, հազիւ նկատելի ամպամած լեռները,
երբ, ահա նկատեց հինաւուրց կաղնին, ուխտա-
վայրը։ Եւ զգացումներու ուժեղ հոսանքի ազդե-
ցութեան տակ, անկարող զսպել ինքն իրան,
սրտի թալկութեան խորքերից, ախ, մը քաշելով,
վերջին հայեացք մը ձգած ասաց. «մնաք բարեաւ
լեռներ, մանկութեան զբօսավայրք, ես գնում եմ,
բայց դնաք իմ տեղը խօսեցէք իմ անգինի հետ..
ամեն մի քայլափոխում իմ սէրը պատմեցէք,
ոհ, եթէ երբէք կարօտի արտսունք գայ թափել
ձեր վրայ՝ մի ընդունէք, յիշեցուցէք իմ սէրը...
իմ խօսքերը...ինձ տեսնալու, իմ ձայնը լսելու
փափագին գոհացնում տուէք՝ հեռուները սէր
երգող թռչուններու գայլայլը հովահարելով տան-
ջուած սրտիկին... թնդ զիշերը սիրաերգ լուսինը
սրտի խորը թափանցած նազելի փայլով իմ սիրոյ
անկեղծ, մաքուր ըլլալուն զգացմունքը անխախտ

պահէ և ցորեկը ձեր տեսքը, մեր սէրը երգէ,
մինչև, որ վերադառնամ...» այսպէս խօսում էր,
ինքն իր արթնցած սրտին հետ և այն աստիճան
գացած անուրջների ոսկի աշխարհը, որ իսկի
չէր լսում իր ընկերների տաք վիճաբանութիւնը,
երբ Խաչիկը — այդպէս էր ընկերների մէկին անու-
նը — դասնալով ասաց. — Ի՞նչ ես կարծում Աշոտ,
ի՞նչպէս կըլլայ հետեանքը, թուրք կառավարու-
թեան բռնած կործանարար ընթացքը հայերուս
հանգէպ, որ այսքան չ'գրուած, չ'տեսնուած
անզթութեամբ տանջում, հալածում է մեզ..
մեզ վթարում է մեր բնիկ անից՝ հայրենքից,
մեր կալուածքը խում է, ինչքը, կայքը, յա-
փշտակում, գեղեցիկները առեանգում, ել որ
մէկը յիշեմ դու ինքդ լաւ գիտես. իմ կարծեօք,
մենք իբրև ստրուկներ յաղթուած՝ գնում ենք
փախչում, ասպարէզը թողնելով մեր դարաւոր,
նենդ թշնամիներին, որպէսզի իրանց կամքի հա-
մաձայն աղաս գործեն, իշմեն. այնպէս չէ,
ինքավստահ ձայնով մը հարցուց աւելի քան
համոզուած, որ Աշոտը իր կարծիքին համամիտ է:

— Չէ որ մենք գնում ենք ոչ թէ չ'վերա-
դառնալու պայմանաւ՝ այլ նիւթապէս և զիտապէս
ուժեղանալու և, վերադառնալով, աւելի մեծ ծա-
ռայութիւն մատուցանելու ազգին, հայրենիքին.
մէջ մտաւ Նազարը:

— Այս, իրաւունք ունի Նազարը, քանի ասում

է, թէ հարուստ վերադառնալով, աւելի մեծ ծառայութիւններ կ'մատուցաննենք ազգին... հայրենիքին... իմ կարծեօք մեր զբացի թուրքերը պիտ զարմանան մեր ունեցած ընդունակութեան վրայ, որ մի քանի տարուայ մէջ հարստացեր, օտար եւրոպական լեզուների հետ ծանօթացեր, գիտնականներ դառուցած եկեր ենք ժողովուրդը կրթել . . օգնել . . կարեկցել . . պատճառաբանեց Սեղբակը, որ ընկերների մէջ թեթևողիկի համբաւն էր վայելում իրա անորոշ և հականայեցք կարծիքներով,

Բայց չէ որ մեր բացակայութեան, մեր հեռաւորութեան շնորհիւ, մեր թշնամիները, արիւնուշտ բռնակալ կառավարութեան որդեգրերը, գործում են, աւելում, ջարդում անխնայ մեր շէն գիւղերը, մեր մշտավառ օճախները մարում, աւերում են... փլատակուած մոխրակոյսներու մի թէ՛կ՝ իրագործուած բարբարոսութանց մի մահասառուու յիշատակ թողնելու է միայն.. և ինչ պիտ ընեմ այլիս քո հարուստ վերադարձը, քո մի քանի լեզուներից մի քանի բառեր գիտենալը, օտար աւելի փառաւոր կեանքի հետ ծանօթանալը.. ըսէք. կրնանք այլիս այդ մոխրակոյսներու արիւնուու գէզին վրայ նոր կեանք հիմնել, նոր շէնք կառուցանել... չէ որ այդ գեռ չ' մարած՝ տաք մոխրների միջի վրէժի, վրէժի ձայնը միայն պիտի լսենք.. և սակայն

հարց է. պիտ կրնանք այլիս վրէժ լուծել, երբ պարտուած ենք, երբ գերեզմանն է թագաւորում մեր պապենական շէն, կենսատու վայրերում, իմ կարծեօք, խրոխտ, վեհերական ձայնով հայրենասէրի բուռն ոգերութեամբ խօսեց Խոչիկը՝ քանի պարտուած մեկնում ենք, պէտք է, անհըրածեշտ է, որ ծանօթանանք մեր ազգին, հասարակութեան օգտին ծառայող նոր ուժերու, երիտասարդ մարմիններու հետ, գործենք նըրանց շաւիղով, գնանք նրանց վեհ ճանապարհով, որպէս զի կարող ըլլանք հիմքից, ժողովրդի ուժեղ աջակցութեամբ քանգել այս չտեսնուած հարստահարութիւններու, չտեսնուած արհաւիրքներու բունը . . . երլարզ Գէօշկը:

Ուր տեղ են այդ նոր ուժերը, նոր երիտասարդները, որ զան մեզի օգնութեան և թէ ինչու համար մինև հիմա եկած չեն օգնութեան. հետաքրքրուած հարցուց թեթևողիկ Սէղբակը, որ, կերեի, խօսուածքից ոչինչ չէր հասկանում:

Նրանք, այդ նոր ուժերը, հոն, Արարատեան դաշտում են, կովկասեան հակայ բարձունքների լանջին, միջամտեց Թորոսը, բայց ոչ թէ նրանք պէտք է զան օգնութեան, հապա մենք մենք պէտք է գնանք նրանց օգնութեան. նրանք այնքան կկարօտեն օգնող ուժերիւ Մեզ մի միայն պէտք է նրանց ընդզրկած շաւղից գնալ, արշէն մենք նրանց՝ և նրանք մեզ օգնած կըլլանք.

փոխաղարձաբար: Բոլոր ազգերու մէջ ալ, ոգեշնորուած շարունակում էր Թորոսը, այդ գգայտն նոր ուժերը, երիտասարդներն էին որ յեղաշընեցին կեանքի սխալ ըմբռնմանց հետևանքները, նրանք էին, որ որոշ չափերով տանելի կեանք մը ստեղծեցին իրանց արենակիցներուն, միայն մենք մնացեր ենք աշխարհի խորթ և անբաղդ որդիքը: Ուշացեր ենք բայց և այնպէս, եթէ առանց վհատելու անընդհատ շարուակենք մեր նոր վարժապետների ճանապարհով, վստահ եղէք, մեզ համար էլ կծագի արև մը բաղդի և երջանկութեան:

Դուք կարծում էք թէ, միևնոյն արհաւիրքները, վաշխառութիւնները, բռնակալութիւնները հոն, այդ հիմակուան մեզանից աւելի բաղդաւոր ազգերու մէջ չկմը, թէ նրանք առանց արեան, կոռուի, առանց զոհերու տիրտապետեր են, կ'սխալքք. նրանք, գեռ սրանից մի քամի գարեր առաջ...ուզում էր ոգեսրութեամբ շարունակել, երբ մինչև հիմայ լուս, մտախոհ նստած կարտպետը՝ ընդմիջեց.—իսչու համար այդ հզօր ազգերու գիտակից տարրերը չեն եկած մեզ օգնութեան, չեն փրկած զուլումի երկիրն էլ լավիշ բռնակալի մահանոտ եաթաղանէն. . . ախր չէ որ մենք ալ նրանց նման մարդ ենք, քրիստոնեայ, չէ որ քրիստոնէական վարդապետութիւնը քարոզում է, օգնել թշուադին—համ Թորոս,

ըսէ, ինչու համար չեն եկած օգնութեան, հարցուց, և այն տեսակ նայուածք մը ձգեց ընկերներու վրայ, որ կարծես թէ, մի ինչ որ հրաշք էր խօսածը և կամ ոչ-ոք այդ հարցը չէր կարող տալ...: Մի քանի վայրկեան տիրեց խոր լուսութիւն: Հեռուից լեռների լսնջին ոչխարներ արածող հովուի սրինգի սուր մեղեդին, ոչխարներու մայիւնի հետ միախառնուած, ներդաշնակում էր նահապետական կեանքի գովքը. հմայքը, այդպէս նուազի և մայիւնի մոգական ազգեցութեան տակ աւելի եռանդուն շարունակեց Թորոս.—իրերու և անցքերու որոշ պատկերը չ'հասկանալուց առաջ քայլեց այդ հարցը, թէ ինչու համար օտար բաղդաւոր քրիստոնեայ ազգեր չեն գալիս մեղ օգնութեան, թէ ինչու համար մեզ ալ չեն բաղդաւորեցնում իրանց նման....: Սիր այդ միենոյն է, ինչ որ, մեր նոր ուժեր—երիտասարդները, պիտի օգնենք նրանց մեզ փրկելու համար... եթէ չենք ուզում մենք մեղ օգնել ինչպէս, կարող ենք օտարից պահանջել բաղդ, երջանկութիւն. ճիշտ է, որ ընդհանուր աշխարհ բոլոր ազգերու մայր հայրենիքն է, որ ամենն ալ եղբայրներ են, բնական ցեղակիցներ... բայց գեռ շատ, շատ հեռի է այն օրը, երբ ընդհանուր մարդկութեան ազատութեան արշալոյսը պիտի ծագէ համահաւասար, ինչպէս արևի լոյսը, ինչպէս զով օդը...

գեռ շատ հեռի է այն օրը, գուցէ, մի քանի
դարով ծածկուած, երբ մարդիկ անխափի, առանց
ազգութեան զանազանութեան, եղբայրական ջերմ
սիրով պիտի գերկլնդխառնուեն, պիտի միանան,
ես կարծում եմ, առաջինը մենք կըլլայինք գըլ-
խաբաց ծնկակոչ համբուրելու ազգութիւններու
միաբերան Ա. սեղանը, համերաշխութեան միակ
նուիրականութիւնը, բայց.. դեռ շատ հեռու է,
այդ երջանիկ, ցանկալի օրը . . . մեզ նը-
ման ազգի մը կ'մնայ լոկ իր թշուառ արենա-
կեցներու վշտերն կարեկցել, օգնութեան հաս-
նել... չէ որ մենք ալ աշխարհի ըոլոր մարդկու-
թեան մէջ տեղ ենք գրաւում, ըսել է, մեզ
օգնելով և ընդհանուր գործերու ալ ծառայած
կըլլանք, իսկ եթէ մենք չենք կամենում մեզ
օգնել, ուրիշ ազգերու օրինակին հետեւելով, ինչ
իրաւունքով նրանցից՝ մեր բազգը, կեանքի
ազատութիւնը խնդրենք, նրանց աղերսենք: Մենք
միմիայն մեր վրայ յոյս պէտք է գնենք, միմիայն
մեր վրայ... եթէ ամեն անհատ իր պարտակա-
նութիւնը անթերի կատարէ, ոչ թէ միայն
աշխարհ, այլ երեակայած դժոխքն ևս մինչև իսկ
արքայութիւն, դրախտ կըդառնայ. որքան խօ-
սենք, վիճենք, այնքան պարզում է մեր հասա-
րակութեան հոգեբանութեան թերի կողմերը.
հիմա համոզուամք, որ ընկեր Խաչիկը իրաւունք
ունէր ըսելու, որ մենք իբրև սորուկներ, պար-

տուած թշնամիներից՝ փախչում ենք.. մեկնում...
ամօթ է մեզ հազար ամօթ. բայց որովհետեւ
ինչ ալ խօսենք, համարենք, համոզուենք, ալ ուշ
է և մենք գտնուում ենք սլարտուած գրութեան
մէջ, ուստի մեր ամենամեծ կարձիութիւնը,
խիզախութիւնը՝ հայրենիք վերադառնալով աշ
աւելի մեծ ծառայութիւն մատուցանելու մէջ
պիտի ըլլայ և ես աւելի քան վստահ եմ,
որ օտարի փառքը, գրաւիչ գեղեցկութիւնը,
մեծանուն համբաւը չ'պիտի կարող ըլլան հրա-
պուրել մեզ և, մենք վերադառնալով, ալ աւելի
մեծ ծառայութիւն կմատուցանենք ցաւատանջ
ազգի մը վշտաբեկ հայրենիքին՝ մտատանջ
վերջացուց թորոսը:

Աշոտը լրած մատիկ էր անում և ինչե՛ր չէին
անցնում նրա մտքէն. նա լուռ էր, բայց վիճա-
բանութիւններու ազգեցութիւնը իւս կըթիշ Պ-
րոշմը գրեր էր արդէն նրա զգայուն սրտում:

Ընկերները ճանապարհին մինչև վերջ վիճում
էին անընդհատ, կարծես մի մեղսալից յանցանք
էին գործած ու վիճաբանութեամբ աշխատում
էին թեթևացնել իրանց սրտի բեռը, յանցանքը:



ՊԱՆԴՈՒԽԽԸ

Պ

Անցեր էր ամիս մը այն օրից, որ Աշոտը մեկնած էր հայրենիքից և թափառում էր Բ. անծանօթ քաղաքի փողոցներում։ Թողունք ընկերները, որք տասնեակ մը օրեր անգործ յուսահատուելէն վերջ՝ նետուած էին հսկայ կեանքի ծովը, դեղերելով, անստոյդ կեսնք, բաղդ որոնելով հեռաւոր վայրեր, անցնինք Աշոտին, որ մեր վէպի հերոսն է։

Աշոտը չէր ուզած շատ ներսերը, հեռուները գնալ և որոշած էր սպասիլ մի քանի օրեր ևս, մինչև որ բաղդը ժպտ այս։ Մխիթարւում էր խորհելով, թէ աւելի լաւ է ուշ հոս գործանալ, սահմանի մօտ, քան թէ հեռուները. ինչու որ մտածում էր, որչափ հեռանամ իմ թանկագին հայրենիքի շէմքից, էնքան շուտ կը մոռանամ, էնքան շուտ սէրս կպաղի։

Թանի օր է ուզում է նամակ գրել, իմացնել իր ինչ դրութեան ըլլալը, յուսաղրել տնեցւոց ևս, բայց ինչ գրէ, իսչպէս բացատրէ։ Ահա, այսօր, վաղը գործի կըլլամ, քիչ ալ դրամ կշահիմ, այն ատեն իրաւունք կունենամ նամակ գրելու, հիմա ինչ երեսով գրեմ . . . ինչ գրեմ, չպի՞տի ըսեն թէ, որչափ անպէտք, ծոյլ,

տղէտին մէկն է, որ առաջի նամակը առանց փողի է գրում . . . և այս տեսակ մտածմունքներովիր եռասիրութիւնը չվիրաւորելու համար, վճռում էր տոկալ, համբերել, սպասել։

Պէտք է ըսել, որ այդպէս մտածելու որոշ պատճառ ունէր, ինչու որ այնպէս համոզուած էին հայրենիքում, թէ օտարութեան մեջ փողը շուշկայում է փոռւած, միմիտյն պէտք է հաւաքելու ժողվել, իսկ ով չէ կարողանում, նա կամ յիմար է և կամ տղէտ։

Մասնաւորապէս պէտք է շեշտել այս կէտը, որ իսկապէս հայրենիքում համոզուած էին, թէ օտարութեան մէջ փող, դրամ շահելը՝ չուր խըմելու չափ գժուարութիւն չունի. այն օրից, որ մէկը մեկնաւմ էր պանդխտութեան, օրերի հետ և համարում էին նրա վաստակը, կարողութիւնը և եթէ նամակ ալ չէին ստանում, կային այնպէսներ, որոնք վերագրում էին թէ այնչափ փող կայ, որ հաւաքելու ժամանակ մինչև իսկ չունին իրանց սիրելիներուն նամակ գրելու, և ստեղծանց այդպէս խորհելու, մտածելու շարժառիթն էլ հէնց իրանք օտարութեան դիմողներն էին . . . ով էր նկարագրում իր չարքաշ, տուայտող կեանքը, ով էր պատմում իր քաշած տառապանքը, թշուառութիւնները և ինչպէս կընալին պատմել, երբ իրանց ապրած մինորդը այն տեսակ վարակիչ դրութիւն մը ստեղծած էր, որ հեգնան-

քի, ծաղրի առարկայ չըլլալու համար, ստիպուած էին լուել, որպէսզի կեղծ յարգանք, խաբուսիկ պատիւ վայելեն... արդէն աշխարհի քանի տոկոսն է ճշմարիտ պատիւ, անկեղծ յարգանք վայելում: Այդ հեղցուցիչ մթնոլորդի մէջ մեծցած Աշոտն էլ՝ շրջապատի կեանքից տարուած, այդ ստոր հոգեբանութեամբ լեցուած, այդպէս էր մտածում, թէկուզ յակամայ,

Իսկ օրերը անցնում էին տաղակալի՛, սըրտամաշ, անգործ, միատեսակ:

Առաւօտ մը սովորականի նման սրճարանի հեռու անկիւնում մենակ նստած խոր մտածման մէջ տանջուում էր հոգեպէս, երբ սրճարանատէրը մօտենալով. «Աշնտ, ասաց, քեզ համար մի գործ կայ իմ վաղեմի ծանօթ՝ Պ. Կարապետովի վաճառատան մէջ ծառայելու. ինքը խղճի տէր, ազնիւ ընաւորութեան մարդ է, քիչ մը կրքու՝ բայց վրատահ եմ, որ քո համեստ, հաւատարիմ բնաւորութեամբ լաւ վարձատրութեան կարժանանաս և ես խօսք տուի, որ կդնաս աշխատելու» համոզեցուցիչ եղանակով մը ասում էր Աշոտին. Այսուրախալի, անսպասելի լուրը իմանալուն պէս հրճուանքից չէր գիտեր ի՞նչ ընէ, ի՞նչպէս շնորհակալութիւն յայտնէ. — «Քո ծառան եմ, աղա, ի՞նչպէս որ կհրամայես» ստրուկ ձայնով մը պատասխանեցնա և իսկի չհետաքրքրուեցաւ, թէ ի՞նչ գործ է, ի՞նչ պիտի ընէ, ո՞ր կարապետովի վա-

ճառատան մէջ պիտի ծառայէ. հերիք է որ գործ մը գտաւ աշխատելու, հետևապէս սկսաւ երևակայել, որ քանի մը օրից իրաւունք պիտ ունենայ նամակ գրելու:

Արդէն երկու ժամ վերջը կարապետովի վաճառատան մէջ ծառայում էր: Կարապետովը ինքը գեր, ոչ այնքան բարձր հասակով, կլոր դէմքով, խորամանկ նայուածքով, կրքոտ ծանր ընաւորութեան տէր մսարձան մըն էր: Նրա համար երբէք նշանակութիւն չունէին ոչ մարդկային զգացմունք, ոչ ընկերի պատիւ, ոչ կարօտեալի գութ: Նա միմիայն իր շահով տարուած՝ մետաղապաշտ գաճաճ մըն էր, եթէ կարելի է այսպէս անուանել, սակայն Աշոտ վրատանելով «ազնիւ բնաւորութեան», երբէք չէր կասկածում անարժան վարձատրութիւն աղայի կողմից:

Եւ այսպէս հու, հաւատարիմ ծառայում էր, այս քանի շաբաթներէ, ամեն օր ուզում է մի քանի կոպէկ փող ինողբել, բայց ամեն անգամ էլ նկատում է, որ, երբ հարցը գալիս է բարեսրտութեան, խղճահարութեան, դէմքը խոժոռած, կէս բարկացոտ հայեացքով, չէ ուզում լսել և կամ չիմանալ է ձևացնում: Ի՞նչպէս ընել, տէր Աստուած, մտածում էր հէք Աշոտը, այս անգամ գոնէ քիչ մը գումար առնէի. ալ չէի ուզիր մինչև մեկնելու կոպանէի . . կոպանէի, բայց

հիմա ի՞նչպէս նամակ գրեմ, եթէ բացատրեմ, որ առաջի անդամը ըլլալով չյանդգնայ փող ու զել, ի՞նչ կըսեն. չպիտի ըսեն թէ գործի յախէ չեկող, ծոյլ, անընդունակ մէկն է, որ չէ վստահանում. իբ աշխատութեան արդիւնքը պահանջել, այս քանի նամակ է զրեցի, պատուցի, զրեցի պատուցի, չէ որ վաղ թէ ուշ պէտք է յանդգնիլ. Էլ ինչու կսպասեմ, ինչու.

Ծանը բեռան տակ ճնշուողի մը վճռական ժէսթով մօտեցաւ Պ. Կարապետովին,

— Նամակ գրած եմ, ձեր զթահայց օգնութեան կսպասեմ նամակս դրկելու համար, վճռական բայց մեզմ ձայնով խօսեց վերջապէս:

— Հա, ինչ է ի՞նչ կուզես, բարկացոտ և խոժոռ նայուածքով մը հարցուց Պ. Կարապետովը,

— Հայրենիքում իմ յոյսով տպրող թշուառ ծնողացս օգնելու համար քիչ մը փող եմ ուզում խնդրել.

Երբ Կարապետովը նկատեց Աշոտի ժեսթը և վճռական ձայնի թոնը, ասաց.

— Հա, լաւ, առ ինսդ բուրի, ձամբէ, բայց ուրիշ անդամ ինք մուզեր, ես ինքս կուտամ, ակնարկելով երկնյուց, իբրև ողորմութիւն :

— Ծնորհակալ եմ աղա՝ Աստուած մէկդ հազար ընէ, արեգ շատ ըլլայ, օրհնելով առաւ դրամը և զգացուած անհուն ուրախութիւնից չէր զիտեր,

ի՞նչ ընէ. պարէ, երգէ, անմիջապէս և եթ ու զեց վազել պօստատուն, բայց ժամանակը անցած ըլլալուն՝ մնաց վաղուան:

Այդ գիշերուայ ունեցած երեակայութիւնները, երազները, անկարող է իմ թոյլ գրիչը նկարագրել, պետք է ըլլալ պանդուխտ և այն էլ Աշոտի նման, որ երազուի: Միայն աս պարզ յայտնի է, որ անհամբեր, անքուն սպասում էր լուսնալուն. ինչու որ այլևս իրաւունք էր ստացած զրած նամակը դըկելու:

Տ Ա Ն Բ

Ե

Աշոտին մեկնելու առթիւ տան զրութիւնը բոլորովին ուրիշ կերպարանք էր ստացեր. տնեցոց և ոչ մէկի դէմքին կարելի էր տեսնալ ժպիտ, ծիծաղ. կարծես մի ինչ որ տեսակ մը սուզ, ցաւ տիրած էր վմթնոլորդը: Աշոտի բացակայութեամբ չկար տան ծաղիկը, մօրը կեանքը, մօրը յոյսը, հետեւապէս և ժպիտ և ծիծաղ:

Նամանաւանդ՝ մտատանջութիւնք սկսաւ աւելի սաստկանալ, երբ անցնում էին օրերը շաբաթները և ոչ մի նամակ, տեղեկութիւն չկար, գոնէ լոկ չոր նամակ մը չզրեց, որ

հանգստանային անվտանգ տեղը հասնելէն, — Քսի ալ թէ չնւզեր, չհեռացնենք մեր քովից ջանելը, գեռ շատ անփորձ երիտասարդ է, գլխուն ինչ փորձանք կռւզայ այս ատեն, խօսէ ինչու լուած նայում ես . . . բարկացու և պահանջկոտայնով մը դիմեց Խաթունը ալեհեր ծերին, որ, մտախոհ հայեացքով կայնած պատուհանի առջև, նայում էր հեռաւոր հորիզոնին, որ մեկնած էր իր որդին, մինուճարը, Աշոտը:

— Էյ, Աստուած ողորմած է, այսօր վազը նամակ կ'ստանանք. մեծ է զօրութիւնը բարձրեալին, միթէ չկայ աստուածային ձշմարտութիւն, մարդկային զգացմունք, գութ, խիզ, ինչ ըրած ենք . . . արդարութիւն և բարութիւն ընող ծերութեան վարձատութիւնը լացն ու սժւզն են միմիայն . . . ալ չկայ աստուածութիւն, ձշմարտութիւն, գութ, զգացմունք, դէն այն ժամանակ կործանուէ աշխարհ, քո տանջանքներով . . . քո տառապանքներսկ քո զուլու մներով . . . և թող նոր աշխարհ մը, նոր երկրագունդ մը շինուի, այսուհետեւ իր փորձութիւններուն, իր ականատես սխալներուն վերջ տրուի աստուածութեան շնչով: Եթէ ոչ այս աշխարհը զուլում է, զուլում, տանջանք է տանջանք, ցաւ է ու ցաւ . . . նախախնամութեան հանդէպ բարկաճայթ ձայնով մը սկսաւ բողոքել ալեոր ծերուկը:

— Հիմա այդ անարդարութեան դէմ բողոքելու րապէն չէ. ես խապրիկ եմ ուզում, տղայէն լուր.... ինչ կընէ արդեօք, որմտ կամքին դերին է. ինչու նամակ չէ զրում... չդիտեր, որ իրա նամակի կարօտով ենք տանջւում . . . չոր նամակը կարող է մեզ սփափել. միմիթարել... ինչու այդքան անդութ է գանեռում... ինչու... հազիւ լսելի ձայնով մտահողսում էր Խաթունը, վախենալով, որ ծերուկը չիմանայ իր ձայնը ու աւելի չդալարուի . . .

Օդը մաայլ խաւար էր ու խաւար երկնարի վրայ մի կապուտակ ջինջ չէր մնացած. բոլորովին ծածկուած էր մութ, թուլսպ ամպերով, թը չուններու կենդանաբար գալլայլը չէր լուռում, եթէ չշիշենք մի քանի ճավան թուչուններու ճովոցը, որոնք կարծես ճիւղէ-ճիւղ թուչելով, ուզում էին հաստատել, որ այդ խաւարի մէջ էլ գեռ կեանքը գոյութիւն ունի... Օդի ճնշիչ տպաւորութիւնից ծերուկը ազգուած՝ ըստեւ.

— Ե՞յ ի՞նչ լաւ է Խաթուն, չես տեսնում օդի հեղձութիւնը.. ուզում է ճիշտ և ճիշտ մեր սրաին նմանել, մեզ ընկերակից ըլլալ.. մութ, ցաւատանջ..

— Ի՞նչ ընեմ օդի կարեկցութիւնը... մեր զգացումներու համապատասխանելը.. թող ամենակարող Աստուած ինքը կարեկցի մեզի.. օգնութեան գայ... ալ, այն ատեն ուրիշ հարց, ես կարծում

եմ, ... մեղայ, մեղայ մեղաւորիս, Աստուածինքը մեզ համար ստեղծած զուլումի տանջանքները չ'պիտի կրնար տանել, համբերել—աղիողորմ վախկոտ ձայնով ընդմիջեց Խաթունը. — այնպէս, որ իր ըսածները միայն ինքը իմանայ. ոչ Աստուած և ոչ ալեօր ծերուկը... եթէ ոչ Աստուծոյ վրէժը սարսափելի է, մտածում էր, սարսափելի...

Այդ տխուր և հոգեմաշ զգացումներով լեցուած էին, երբ յանկարծ ներս մտաւ Աննիկը, որուն գալը մասամբ մը թեթեռութիւն էր բերում թշուառ ծնողաց սրտին: Իրաւամբ, եթէ վերջերս միսիթարութիւն մը ունէին, դա լոկ Աննիկի, իրանց ապագայ հարսի ներկայութիւնն էր:

Նրանով իրանց պանդուխտ որգույ կարօտը յագեցնում էին: Աշոտի մայրը արդէն սկսեր էր նկատել, թէ ի՞նչպէս շատ անդամ նա տիսուր է, մտածկոտ.... ի՞նչպէս շատ անդամ ուզում է մի ի՞նչ որ հարցնել... մի ինչ որ իմանալ... հասկանալ, ու չէ յանդգնում: Խեղճը, մտածում էր. «Արդեօք նա էլ ինձ նման տանջւում է սիրականի կարօտով.... արդեօք նա էլ ինձ նման կարօտի արտսունքներ թափում է գաղտնի.. մենակռւկ» և անպատճառ վճռում էր, «Եթէ նամակ գայ, ամենէն առաջ ապագայ հարսիս պիտի հաղորդեմ, իմ տղիս փոխան՝ նրա վշտին վշտակից, ցաւին ցաւակից պիտի ըլլամ»:

Իսկապէս ալ Աննիկը եկած էր մի տեղեկութիւն, լուր տոնելու. նամակ կայ, թէ ոչ, ի՞նչ է զրում, բայց չէր յամարձակում, չէր յանդգնում որևէ բան մը հարցնել: Եւ այդ հարցը միտքը եկած ժամանակ՝ կարմրում, գունատում էր: Ալ ի՞նչպէս կրնար հարցնել, երբ զգում էր, հոգին դող պիտ զգայ... լեզուն կակազէ... Այսպէս մտածելով կայնած էր՝ սիրոյ տանջանքի դրօշմը դէմքին, յուսալով, որ Խաթունը մի բան կ'հարցնէ.... չէ, որ ինքն էլ աղջիկ է եղած, ինքն էլ է սիրած... բայց սիրականից հեռու ապրած է, նրա կարօտով տանջուած է, դա չ'գիտեր և սկսաւ դարձեալ մտատանջուել... երբ, Խաթունը դառնալով Աննիկին ասաց.

— Հարսմ՛, քո արեին մատաղ, քո կոխած հողին դուրպան, գեռ նամակ, լուր մը եկած չէ, գեռ կանուխ է, այսօր, վաղը կ'ուգայ, հոգ մ'ըներ.. առաջին անգամ քեզի իմաց կուտամ, քեզի. — ըսելով զսպեց յուզմունքը, մօտենալով համբուրեց նրա այսերը և սկսաւ շոյել գանգուրիկ, շեկահեր մազերը... :

Աննիկը, որ զգում էր իրա հոգեկան զգացումներու փոթորկուելլ՝ Խաթունի խօսքերից կէս մը սիրտ առած, կէս մը քաջալերուած ձայնով հարցուց. «Մայրիկ հա... նամակը երբ ստանաս, ինձ ցոյց կ'ուտաս, չէ.. դու ըսիր, ըսիր, որ նամակը ինձ ցոյց կուտաս, չէ...» և

երկում էր, որ ուզում է մի ինչ որ է ըսել..
բայց չկարողացաւ և, շտապով համբուրելով
մայրիկին ձեռքը, դուրս աճապարեց.. զգալով,
որ չպիտի կընայ զապել իր արտօնութը... :

Խաթունը և ծերը ապշած դիտում էին իրանց
ապագայ հարսին, որ խելագարի նման վազում
էր այն արահետից, ուրկէ իրանց Աշոտին հետ
շատ յաճախ կարելի էր տեսնալ... . Արդեօք
Աննիկը վազում էր հինաւուրց կաղնիի մօտ,
ուխտավայրը... :

Գլխակախ դիտում էին, մինչև որ նա անհետացաւ: Երկուն էլ առանձին, առանձին վեր
լիշեցին իրանց երիտասարդական սէրը... կեսն-
քը... և ոչ ոք չէր ուզում խօսել, ոչ ոք չէր
ուզում այդ անուրջ վերապրութների լարուած
դրութիւնը խանգարել... . Որչափ կ'ուզէին, որ
այդ բոպէն երկարէր, թէկուզ դարեր... կ'երեի,
որ իրանք այդ դրութեան մէջ երկար կ'մնային,
եթէ դուրսի տեղատարափ անձրել չսթափեցնէր
նրանց: «Ահա, Խաթուն, մեր տեղը երկինքն է
լալիս, տեսնում ես» ըսաւ, և այժմ միայն նկա-
տեց, որ Խաթունը զացած էր իր առսնձնա-
սենեակը.. Յուսահատ մօտեցաւ պատուհանին և
սկսաւ դիտել լացող երկնքի կաթիլներուն, «Լաց,
լաց, միենոյն անօգուտ է, սիրտս չի հսկահարում,
զգացու մներուս թախիծն չի թեթեանում» — խօ-
սում էր ինք իրան:

Համարեա, ամենօրեայ տնական աշխատու-
թիւններից վերջ, սովորութիւն էր դարձած՝
մտածել... խորհել... տանջուել սրտմաշնուք հար-
ցերով:

Իսկ օրերը անցնում էին, տաղտկալի, ցա-
ւատանջ... . Այդպէս օր մալ՝ սրտամաշ հորցերի
վշտաբեկ տպաւորութենէն յոզնած՝ լուռ, մտախոն
նստած էին, երբ ներս մտաւ դրացի Մկօին
մանչը, որ քաղաք էր զնացած առօրեայ պէտքերի
համար: Իրանց գիւղի հետ առևտուր ունեցող
խանութպանը, նամակ մէր տուած Մ-ին յանձնե-
լու համար և այդ էր, որ վերադասնալիս գիւղ
անմիջապէս եկած էր նամակը յանձնելու... —
«Աչերնիդ լոյս, Աշոտէն նամակ կայ Զեզ» ըսելով,
յանձնեց նամակը: Ուրախութիւնից չգիտէին,
թէ ինչ անեն, լան, ժամանակը չնորհա-
կալութիւն յայտնեն: Նամակ բերողը իրանց աշքին
եղած էր հիմայ մի ռահվիրայ, մի հերոս... .

— Բաց, բաց նամակը կարգա, քո հոգուն մա-
տաղ, ինչ է զրում, ինչ է անում իմ տղաս, իմ
հոգին... զողգողալով աղերսում էր մայրը... :

Կարգացին նամակը. ուր որդին զրում էր
իր անվտանգ համնելը, տպաւորութիւնները, բա-
ւական գժուարութիւններից վերջ զործ գտնելը,
ընկերների հեռուներ մեկնելը, մենակութեան
գալկութիւնը, սիրականին կարօտը, ծնողաց մէրը.
ապագայ յոյսերը, դրկած փողը.... Նամակը

կերջացնում էր. «Մօտերս դարձեալ կ'զրկիմառվի
և բարեներով:

Աննիկը արդէն իմացեր. էր նամակի գալը,
Ուրախութիւնից, քաշուած մի գաղանի անկիւն,
լուլս էր: Դա կարօտի և սիրոյ, վշալ և հրճուանքի
խառնուրդ արտառոք մէր.

ԿՈՐԱՊԵՏՈՎԸ.

Զ

Նամակ դրկած օրէն ասդին, Աշոտը, կարծես,
նոր եռանդ, նոր ուժ էր ստացած. աշխատում
էր մեծ հաճոյքով: Ամենածանը աշխատութիւն-
ները մինչև իսկ թւում էր իրան, իրրե մի խա-
ղակը: «Ամեն դժուարութեանց, հալածանքի . . .
կոպտութեանց պիտի տոկոմ, համբերեմ, — խոր-
հում էր շարունակ, — մինչև որ օրս լրանայ, նը-
պատակիս հաննեմ»: Թէպէտ մեծ ցաւօք, մտա-
տանջութեամբ նկատում էր աղա կարապետովիր
վերաբերմունքի փոփոխութիւնը դէպի իրան,
այն օրից, որ փող էր ուզած.... «Դժուար է,
շատ դժուար, հլու, հաւատարիմ ծառայել և
չ'զնահատուել.... Գոնէ խոժոս նայուածքը,
դէմքը ժալտար, բայց ինչ արած, պէտք է տոկալ-
մի կերպ համբերել»:

Կարապետովը իսկապէս անտանելի էր դար-
ձել. ամեն մի քայլափոխում անիրաւացի հայ-
հոյում էր, գործին չէր հաւանում: «Հերիք չէ, որ
Զեզ գործի ենք տանում, աշխատել ենք սովո-
րեցնում, դեռ եկ փող էլ վճարէ», մրթմրթում
էր շարունակ քթին տակէն: «Զրիակերնէր, ձեր
երկերը ի՞նչ ըրիք, որ հոս ի՞նչ ընէք», խօս-
քեր, որոնք քալինման կնստէին արդէն յոզնած,
վշտաբեկ Սշոտի սրտում: Բայց քանի որ վճուած
էր համբերել և տոկալ... լուռմ էր և սովասում: Օր
մը ախուր, մտատանջ, օր մը յոյսով, համբում էր
օրերը կալանաւորի նման, անձնուիրաբար նուի-
րուած իր փեմ նպատակին: Նա մանաւանդ, երբ
տեսնում էր նորեկ հայրենակիցների աւելի
թշուառ վիճակը. անգործ, անմիխիթար, շատերը
շեղուած, անբարոյական կետնքի հոսանքին մատ-
նուած.... ոմանց՝ վեներական հիւանդութեամբ
վարակուիլը, միւսներու՝ օտարի փառքից տար-
ուելը. շատերին՝ անվերագարձ կորուսար, եալին:
Այս զեղիս և ախուլ կեանքերի հեռանկարից սար-
սափած, աւելի ուժ, աւելի եռանդ էր ստանում,
աւելի աշխատով աշխատում: Բնդինակառակն՝ Ա-
շոտը, որքան աշխատաւմ էր կարապետովին սի-
րաշահել, գոհացնել, օգտակար գառնալ, կարծես,
կարապետովը ալ աւելի խոժոսում էր, ալ աւելի
ստելի վերաբերում: Ինչով բացատրել՝ չգիտէր
«Եթէ իմ ներկայութիւնը այդքան անհաճոյ է,

ինչու համար ինձ պահում է, հաշիս չէ տալիս, թէ զնա, կորիք, քո բնութիւնը ինձ դիւրեկան չէ, ինձ օգտակար չես կարող ըլլալ, ուրիշ տեղ բաղդր որմնէ» — այս հարցերն էին, որ վերջերս մտածութեան առարկայ էին դարձել Աշոտին Պէտք է վերջապէս այս անորոշ դրութեան վերջ տալ, վճռում էր հասկանալ գաղտնիքը, բայց ինչպէս ընել, ինչպէս հասկանալ, իսկ ուղղակի իրան հարցնել, մեծ, շատ մեծ յանդուդն քայլ կըլլար. մինչև իսկ կարող էր, մի զուցէ, աշխատած տեղից զրկուիլ, հետեապէս և անամակ զըրելու իրաւունքից»: Ծանօթ մը, սրտակից մը չունէր, որու միջոցաւ, զնէ, կարող ըլլար իմանալ գաղտնիքը, կամ, աւելի ճիշդը, իրականութիւնը. ինչ ընել:

Այսպէս մտատանջ և տանջալից անցնում է ին օրերը. ոչ մի ելք, ոչ մի միջոց գտած չէր գաղտնիքը իմանալու համար:

Մեծ զարմանքով նկատեց իր ծանօթ սրճարանապետի չյուճախելը, որուն միջոցաւ, զոնէր կարող ըլլար մի բան իմանար «Սկ, անողոք բաղդր ամեն կերպ հալածում, հետապնդում է ինձ... Միթէ անբաղդ եմ ծնուած և անբաղդ եմ մեռնելու, ո՛հ, Աստուած»: Ուզում էր բզաւել, սակայն անյայտ, անբացարելի վախ մը, գերեզմանային սոսկում մը զգաց . . . և յակամայից հայեացքը կարապետովին ուզգեց, կարծելով, որ

իրա հոգեկան վրդովմունքը . . . խոսվը զգալով, զոնէ մի մխիթարական խօսք կամ ժպիտ չխընայեր, գերի ընկած, թշուառ պանդուխտի մը մաշւնդ . . . տաջուած սրակիը հովահարելու: Իսկ կարապետովի մոայլ գէմքի արտայայտութիւնը, ոչ թէ մխիթարական, սփոփիչ՝ այլ աւելի խիստ, աւելի բարկացոտ էր, նա, կարծես, ուզում էր ըսել. «Թէ ես քո հոգեբանութիւնը շատոնց հասկացած եմ, ինչ ծաղիկ ըլլալո՛ նոյնպէս, և քեզ պէս շատերից կշտացած»: Այդ խոժոս նայուածքէն սարսափահար՝ առջել սկսաւ նայել, վախենալով, որ երկու հակահոգեբանութեամբ լեցուած հայեացքներից կարող էր մի ինչ որ վատ, անախորժ բան դուրս գալ:

Ալ չգիտեր, թէ ինչպէս երեկոյ եղաւ: Գը նում է տուն հանգչելու, չասաւ տուն: Յոզնած մարմինը ձգեց երկաթեայ հին, ժանդոս մահճակալի վրայ, բայց քունը չէր զալիս, աչերը չէր գոցւում . . . մտածկոտ խորհում էր իր անբաղդ վիճակի վրայ: Պատուհանից երկաց թագուհի լուսակի սինը, սգաւոր կոյսի մը նման՝ կապոյտ կամարի սինը, սգաւոր կոյսի մը նման՝ կապոյտ կամարի սինը: «Թո չքնաղ, նազելի նայուածքին զուրպրայ...: Վայ չքնաղ, նազելի նայէ, բայց ինչու համար քո գէմքն պան, նայէ, նայէ, բայց ինչու համար քո գէմքն էլ մոայլ է ու խաւար, ինչու համար քո վայց լուսն, հմայիչ տեսք էլ կորուցեր է իր առջի սիրունութիւնը, զարդը, Որո՞ւ սուզն ես լալիս... միթէ դու էլ ինձ նման սիրականի կարօտով ես

տանջւում, միթէ դու էլ ինձ նման հայրենիքից հեռու օտարներով, անծանօթներով ես շրջապատուած. . . Դուն չես զիտեր, որ հեռաւորերկի պանդուխտներու հայրենի վերջին յիշատակն ես, զարթօնքը սրտին...ինչու համար մըռոյլուած, վշտաբեկ եւ նայում . . . Ես չուզեմքեզ այդպէս տեսնալ, ինձ ցոյց տուր քո հայրենի նազելի գէմքը, որու մէջ հեռաւոր պանդուխտը, գուցէ իր սիրականի ժպիւրը, հայեացքը նշմարէ . . . գէհ փալէ, փայլէ, յուսոյ վերջին նշոյլ....»

Ո՞վ զիտէ դեռ որքան կզառանցէր մեր խեղճ Աշոտը, եթէ թուխալ, ոև ամպ մը չզար, չծածկէր լուսնոյ դարկահար գէմքը... և երկար սպասող նինջը չզար հանգստացնելու նրա կէսքուն, կէս թմրած աչքերն ու ուղեղը:

Առաւօտ նա սովորականից ուշ վեր կացաւ: Անմիջապէս, առանց նախաճաշելու վազեց, շտապեց գործին, որ տեղի չայ կարապետովի հայնոյանքներին: Բայց և այնպէս գաղտնի զզացմունք մը գուշակել էր տալիս մի ինչ որ նոր կոռուփ, նոր հարուած....: «Է՞հ, Աստուած ողորմած է, ճակատագրնիս ինչ որ զրուած է, պիտի տոկանք» մտածելով, խրախուսելով իրեն, մտաւ խանութ: Կարապետով զրամարկղի մօտ նստած, խոժոռ գէմքով, բիրտ բռնակալի զազիր հայեացքով, զիտում էր չորս կողմը:

Աշոտին սովորականից ուշ գալը կարապետովի ասանձին ուշադրութիւնն էր զրաւած. Նայում էր նրան, ինչու մի ոճրագործի, որուն սպասում է անպայման պատիժ, զրկանք:

Սակայն Աշոտը առանց կարեռութիւն տադրու, սովորականի նման պատրաստ կայնած, ըստ պասում էր հրամանի, գործելու, երբ կարապետովը հրաւիրեց սկնեակ, ուր մի քանի ըուբէի ներկայացնելով՝ ըստաւ.

— Ահա քեզ սպատկանելիքը ստացիր և զիսցիր, որ սրճարանապետի ունեցած պարտքդ էլ վճարած եմ:

Աշոտը կաթուածահար եղածի նման ոչինչ չկարողացաւ պատասխանել, մի քանի ըստէ անշարժ կայնած, նայում էր, թէ տուած դրամին և թէ կարապետովին, որուն գէմքը սովորականից քիչ մը մեղմ էր թւում, աւելի փաղաքշականից կան....: Մտածելով, որ յարմար ըոպէն է, եթէ աղաչելու, պազատելու, ներողութիւն խնդրելու վնէ, գուցէ ներէ, գութի գայ, վերաբերմունքը փոխէ, ուստի ըստաւ.

— Աղա, ներողութիւն, քո հոգուն դուրական, անզամ մըն ալ չեմ ուշանար.. քունս տարած էր, չկարողացայ արթնալ, հայրենիքում իմ յոյտով աղբողներու սիրոյն, կաղաչեմ, ներէ:

կարապետովը մի քիչ մեղմ, փաղաքշական կարապետովը մի քիչ մեղմ, փաղաքշական կարապետովը մը նրա համար, որ անզամ մը ծեծերեցած էր նրա համար, որ անզամ մը ծեծերեցած էր նրա համար:

ուած էր իրա ծառայից և վախենում էր, որ հս-
նոյն դէպքը կրկնուի, իսկ երբ տեսաւ, որ դի-
մացինը աղփողորմ ձայնով աղերսում է, սիրտ ա-
ռած, քաջալերուած՝ պաղ, յանդիմանական ձայ-
նով ըստաւ.

— Երկար խօսելու պէտք չկայ... ահաւասիկ
քեզի պատկանածը, իմ տեղս ուրիշ ըլլար, աս-
էլ չէր տար, բայց ես չեմ կրնար, առ և աղատ
ես, ուր որ ուզես, կարող ես գնալ...

— Ախր ես այնովէս հաւատարիմ ծառայում
եմ, հլու, հնազանդ, ուր գնամ, որու գնամ, ծա-
նօթ չունիմ, դարիստ եմ, օտար, և քիչ մնաց
որ արսաւասուէր:

— Քիչէր կան միթէ քեզ պէս, աճողջ աշխար-
հը լեցուած է զարդարներով, ձեր գարզը էս պի-
տի հոգամ, գնա ուր որ կուզես, որու որ կու-
զես, գնա, թափառէ, չարչարուէ, տանջուէ մի
քիչ, որ հասկանաս իմ արժէքը, այն ատեն այլ
բան է, կուզաս, կաշխատես, նորից բան մը
կընենք . . . :

Աշոտը այդ խափուսիկ խօսքերից քիչ մը
յուսագրուած՝ տուա իրան տրուած դրամը, համ-
րեց նայեց, կրկին համրեց: «Միթէ ասիկա՞ է իմ
աշխատութեանս, մի քանի ամիսներու արեան
քրտինքի արդիւնքը, այսքան աժմն, այսքան
քիչ»: ուզեց բողոքել, որ այդ մի ամսուայ զին-
է, ինքը այս քանի ամիս է աշխատում է, բայց

կարելի է սխալուաւմարգը, լաւ է հարցնել:
— Աղա, տուած հաշիւը ձիշդ չէ. պակաս է,
կարելի է սխալած էք, այ, նայէ:
— Եկուր ու ասանկ անառակներուն նորից
գործի առ, ի՞նչ... քիչ է, ես այդչափ վաստա-
կակայ, իսկ վեասիս չես ուզեր ընկերանալ, կկար-
ծես, թէ չեմ կրնար քեզանից վեաս պահանջել...
ահա, մի բուրլի ես, դէ, հայդէ, կորիր:

Աշոտը՝ մինչկ իսկ չնկատեց մի բուրլին
տալը, գուրս փախաւ սարսափած, որովհետեւ ի-
րանից կարող էր վեաս էլ պահանջել . . . և ով
պիտի չհաւատար:

Գլուխը կախ, ուժերը թուցած, անիծելով
իր սկ անողոք ճակատազիրը, գնաց ուզդակի
պահանդախաներու որճարանը՝ իր նմաններուն
տեսնելու, գուցէ, քիչ մը միթարուելու:

Հազիւ նստած էր, թաղուած խոր մտա-
ծումներու մէջ, երբ սրճարանատէրը օրեր առաջ
ստացուած նամակ մը բերաւ յանձնեց: Նամակը
անից էր, հայրենիքից: Գրում էին. զրկած դը-
րամին ստանալը, անգամ մըն ալ տեսնելու կա-
րամին ստանալը, անգամ մըն ալ տեսնելու կա-

րամին ստանալը, անգամ մըն ալ տեսնելու կա-
րամին ստանալը, անգամ մըն ալ տեսնելու կա-

Երեսացին արտասուքի կայլակները . . . նաև լա-
լիս էր... լալիս... անտէր... անօպնական . . . :

ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Է

Զմեռ էր, ցուրտ, հոգեմաշ ձմեռ։ Գիւղական
կեանքը, աշնանային ժրաջան աշխատութիւննե-
րից յոդնած, ստացեր էր մի ախրատանջ, միա-
պաղաղ կերպարանք։ Այլիս դաշտերի մէջ, հնա-
հնն, քրտնաթոր աշխատողների խմբակները չէ-
ին երևում։ Չէր լուռում աշխատաէր մշակի ո-
գեսրիչ ծիծաղը, աշխատանքի երգի ձայնը, չէր
լուռում և երգող թռչուններու կենդանարար
դայլայլը։ ամեն ինչ ախուր էր, և այն աստի-
ճան վշտալի, որ բնութիւնը, կարծես, կենսա-
տու դարնան հմայիչ գեղեցկութիւնից զրկուած
սղում էր, լալիս . . . :

Թ. զիւղի տեղացիք ալ մասամբ ցրախց
պատսպարուելու և մասամբ մըն ալ մոռնալու
սպալաց բնութեան խորազգիչ տպաւորութիւնը,
ներսերը քաշուած, մի կողմից՝ երիտասարդք վի-
ճում էին պանդուխտներու կեանքից, առօրեայ
հարցերից, միւս կողմիցն էլ ծերերը յուսադրում

գալրնան մօտալուտ գալստով։

Եյդ օրերը մօտակայ հայ զիւղ մը քուրդ
աւազակ աշիրէթներու խմբի մը կողմէ յարձակ-
ման էր ենթարկուած։ Անտէր, անպաշտապան
զիւղը թալլած կողոպտած, նրանք, մի քանի հայ
գեղջկուհիներ առեանզած, հանգիստ սովորական
խաղաղ սրտով, յաղթական «հուրրա»ներով մեկ-
նած ժամանակնին, խումբ մը անծանօթ կտրիմ-
ներով պաշարուած էին դտած ինքինքնին։ Ելք
չկար։ Կամ զէնքի զօրութեամբ պէտք է ազատ-
ուեին և կամ անձնատուր ըլլային։ Լեռնցի քըր-
դի հպարութիւնը չէր զիջած յանձնուելու և վը-
ճուուած էր կոռւել։ Գիւղի ամեն անցքերը գոց-
ուած, մի խումբ կտրիմներու պաշտպանութեան
տակ էր։ Սկսուած էր երկու կողմէն կատաղի
կոփւ մը։ Քուրդերը վիրաւոր առիւծներու նման
զրոն էին տուած զանազան կողմեր, բայց հան-
գիպած էին քարէ սեպ-ապառաժ զիբքերու,
անխախտ կայնած վազրի նման քաջերու։ Եր-
կաթը մետաղին էր հանդիպած։ Մի քանի ան-
գամ էլ քրդերը զրոն էին տուած անվիատ, բայց
ամեն անզամ էլ մեծ զոհերով նահանջած։

Տեսնելով, որ անխնայ կոտորւում են,
փրկութիւն, ձար չկայ, որ իրանց ընկերներից
շատերը կիսամեռ ընկան թշնամու մահարեր
փամփուշից, և վիրաւորները պաղատում են
անձնատուր ըլլալին, զինաթափ եղան։ Անձա-

նօթ իմբին Պետը կարիճ, երկայն հասակով, լայն թիկունքով և ջլապինդ բազուկներով առոյգ երիտասարդ մըն էր: Նա հրամայած էր անմիջապէս վիրաւորներուն վէրքերը՝ իրանց մօտ զրտնուած՝ վիրաբուժական գեղերով կապել, իսկ 20 անձնատուր եղողներէն 4 հոգիի, լաւ մը դանակոծելէն վերջ, ըսած էր.

Զեր կեանքը ձեզ եմ խնայում, որ գնաք պատմէք ձերոնց՝ քաջերի վեհանձնութիւնը. ինչ կարծէ ինձ այժմ ձեզ սպաննել... մի քանի գընդակը բայց չեմ սպաննում. որովհետև գուք ինձ յանձնուած էք, իմ խղճի պատասխանատուութեան տակ կդանուիք: Այդ խեղճ անզէն հայերը, որ կողոպտում, թալլում, ջարդում, առեանգում էք, ըսէք. ի՞նչպէս, դ՞ո՞ն կմնայիք, եթէ որ ես ալ ձեզ հետ այժմ նոյնպէս վարուէի: Եթէ արեան կարօտ էք, դիակի սիրահար, քաջերի դէմ կոռւեցէք...: Դուք կարծում էք, թէ ձեք ըրածը քաջութիւն է, հայրենասիրութիւն է, ոչ, դա զարշելի ստորնութիւն է, ցածը լրութիւն է...: Մինչև հիմա եթէ հայերը լուս, անտառունջ համբերած են, դաւք կարծում էք, թէ վախից է և կամ չէին կրնար վրէժ լուծել, ոչ սիսալում էք...: Նրանց ամենամեծ սիսալը եղած է, աւաղ, իրանց զոհերովը, տիսմար լուռթեամբը ձեզ խղճահարել, զգաստացնել, իսկ դուք երես առած, անտառի լակոտների պէս քանդում, ա-

ւերում, չարդում էք: Զեզ ազատ եմ թողնում, որ գնաք պատմէք ձերոնց, թէ մենք թի ու թիկունք պիտի բլանք այդ աշխատասէր, աշխարհաշէն ազգին, (Պետը խօսում էր քրդական մի որոշ բարբառով) որ եթէ գուք մի զիւղ աւերէք, մենք 10-ը պիտի տւերէնք, եթէ մէկը ըսպաննէք՝ մենք տասը պիտի սպաննենք. այս գանակը ոսկորին է հասած... ի՞նչ որ ընէք, տասնապտտիկը պիտի ստանաք... տաստօրէն վաճառող մը լաւին, և ընդունակ կըլլայ տաստօրէն հասուցանել գէշին»:

Այս դէպքը մի քանի օրեր առաջ էք պատահած: Շրջակայ քուրդերու մէջ խլրտում մը, վայնասուն մը ընկած էր: Թէ ուզում էին վրէժ լուծել և թէ սարսափում էին մէկին տասը վըրայ տալէն....:

Այդ երեկոյ էք, որ զիւղի երիտասարդները, կողմանակի լուրեր հաւաքած՝ այդ անցքի մասին էին խօսում: Հոդ էր և Աննիկը: Տեղւոյն սովորութեան համեմատ գպրոցի սրահում էին ժողովուած, ինչպէս մշտական հաւաքւում էին զիւղի մտաւոր ուժերը՝ զաղափարի փոխանցումներ ունենալու համար:

Մկօն, որ լաւ տեղեկութիւններ ունէր հաւաքած, անհամբեր դարձաւ ներկաներուն և — Տղերք, ըսաւ, այդ անծանօթ խումբը 15 ընկերներէ բաղկացած է, չնայելով, որ քրդե-

րէն են խօսած, հայեր են եղեր, հայեր . . .
Կովկասից եկած նոր ուժեր.....

— Այս, ես ալ այդպէս իմացայ, իրաւունք
տուաւ Սերոբը, Կովկասից են եկած և նրանց
մէջ է եղեր և մեր Խաչիկը, և մեր Թորոսը: Ա-
նոր համար վերջին զրած նամակին մէջ՝ զրում
էր, թէ ինձանից շուտ նամակ մի սպասէք...:
Շատ հաւանական է, շարունակեց Մկոն, գնա-
ցին և տեսան, որ զիտցածնուն, կարծածնուն
չափ հեշտ չէ պանդստութեան զաժան կեանքում
տոկալը և եկան իրանց տունը քանդող դարա-
ւոր ոսոխներից վրէժ լուծելու . . .:

— Մկօ, չկրցա՞ր իմանալ, թէ ո՞ր կողմը գնա-
ցեր են և թէ ինչ է եղած նրանց բուն նպա-
տակը, հարցուց Սեպուհն:

— Մկոն, խօ զիւտէք, բանի մը որ գնայ, ա-
մեն բան մանրամասն չիմացած՝ չգար, չհանգս-
տանար: Նրանք Կովկասի հայ ական
կոմիտէի շարքերում են գործում, և ոչ թէ ան-
հատական մի խումբ է: Եկած են, խօսքը մեր
մէջ մնայ... ձայնը ցածացնելով ուզեց շարունա-
կեւ բայց յանկարծ բան մը զզալով, կանգ ա-
ռու, և մօտենալով պատուհանին՝ զիտեց զուրս:
Դուրսը մութ, խաւար զիշեր էր: Մի քանի
քայլ հեռուն չէր կարելի ոչինչ նշմարել. ով
պիտի յանդնէր այդ տեսակ մութ զիշեր դուրս
դար նա մանաւանդ, երբ ժամանակները արիւ-

նոտ էին ու անապահով: Զորս կեղմը լաւ մը
զիտելէ և համոզուելէ վերջ, որ մարդ չկայ, ընդ-
հատած խօսքը աւելի ոգկորիչ և խրոխտ ձայնով
մը շարունակեց.

— Նրանք, ինչպէս ըսի, Կովկասի հայ կոմիտէի
շարքերում են գործում, եկած են տեղույս
ժողովուրդը կազմակերպել... զինել. որպէս զի
նա ընդունակ ըլլայ իրա անմեղ արիւնը ծծող
տգրուկներու դէմ գործել... ի հարկին և կոռել
մինչև իսկ:

— Նրանց Պետը շատ զիւղեր քարոզեր է, թէ.—
«Աշխարհ լեցուած է հայ զարիպներով, պան-
դուխտներով, հայրենիքը կեանքէ զուրկ՝ որբա-
նում է... Գնացողներից շատ քչերը վերադար-
ձան. օտարութիւնը մեր օճախն է քանդում, մեզ
ոչնչացնում է: Հազարաւոր գնացողներու հա-
զարաւոր յոյսերն օգուտ մը տուամ հայրենի-
քին: Զնաշուենք գնացողների անվերադարձ կո-
րուստը... բայց կրցաւ ձեր վիճակը այնպէս մը
բարելաւել, որ կարիքը չզգայինք այլևս օտարնե-
րու զրկում կեանք, հանգստութիւն որոնել, կր-
ցաւ ձեր վաշխառուներու տոկոսին, կողոպու-
տին վերջ տալ, կրցաւ ձեր գեղեցիկները առե-
ւանգող, վավաշոտ աւազակներուն սարսեցնել,
կրցաւ ձեր պատիւը, ինչքը, կայքը յափշտակող-
ներուն արժանի պատիժը տալ . . . կրցաւ ձեր
սուրբ նուիրականութիւնները ոտնակոխ ընող

տմբսիին շղթայիլ, սահճարկել... կրցաւ, վհրջապէս, ձեզ համար ապահով, խաղաղ կեանք մը ըստեղծել, որուն այնքան կլարօտիք՝ քանի գարերէ ի վեր... և ինչպէս կընային օդնել, երբ նըրանցից բաղդառները, արդէն լքած, հնն հեռաւոր հորիզոններում օտարների շքեղ կեանքի հետ ընտելացած, մոռանում են, թէ ազգ, թէ տուն, թէ հայրենիք։ Այն թշուառները՝ ուրոց մէջ գուցէ որոշ չափով մեռած չէ հայրենիքի սէրը, կարօտը, երբ պանդխառութեան գաժան, մահասարսուու տանջնքների դէմ մաքառելով, իրանց չարքաշ գոյութիւնը պահպանելու վրայ են ճինում, մտածում, նրանք կընմն ուրեմն մեզ օդնել, կարեկցել։ Ո՞չ երբէք։

Սակայն հայրենիքի վէրքը մահացու է, ովրան է խոցուած, վիրաւոր... նրան պէտք է կատարեալ բուժում։ Մեզի, միմիայն մեզի, ժողովուրդի հիմնական ուժի լըմբոստացումով, ապստամբութիւնով է, որ կարելի պիտի ըլլայ այդ լայրը, անարդ կարգերուն վերջ տալ... կարելի պիտի ըլլայ տանելի կեանք մը ստեղծել։ Հետեապէս, եթէ ուզում էք սիրականի, «ազիղ» զաւակի կարօտով շտանջուիլ, եթէ ուզում էք կանգուն պահել ձեր պապենական օճախը, եթէ ուզում էք ձեր ցեղի ազատութիւնը՝ զինուեցէք, զինուեցէք, զինուեցէք։

Բոլոր ներկայ եղողները լարուած ուշադրու-

թեամբ մտիկ կընէին, խորհելով արդեօք կըկին ապասել թէ շարժուիլ, իսկ եթէ շարժուիլ, ի՞նչ ձանապարհով զնալ . . .

Հննիկը, որ այս խօսակցութիւնների ժամանակ ներկայ էր, ուշի ուշով պահպատիստների գաժան կեանքը ըմբռած, ընկած էր խոր մտադանջութեան մէջ։

Եւ այդ իսկ մատանջ, յուզուած գրութեամբ վերագարձած էր տուն։ Դէմքը թախծալի, ինքը յուզուած, քաշուաւ իր առանձնութեան սենեակը և սկսաւ երեակայել Աշոտի տանջալից կեանքը։

«Ի՞նչ կընէ արդեօք, որու լուծի տակ կտանջուի նա մենակ, անմժիթար։ Ի՞նչու այսչափ ժամանակ նամակ չէ զրում, ի՞նչու...։ Այս, եթէ կարողանայի թոշուն ըլլալ, այս ըոպէիս կթաշէի, կարողանայի թոշուն ըլլալ, այս ըոպէիս կթաշէի, յութիւն կունենար մեզ համար վիշա, տանջանք, թախիծ... ինձի թւում է, թէ երբէք, երբէք։ Մեր սիրոյ յաղթական ուժից պարտուած՝ կհաւասարէին սար, ձոր, լեռ, գաջա...։ Յիշում է արդեօք, որ ես իրան ըսի. «աւելի լաւ է զետիս արդեօք, որ ես իրան ըսի. «աւելի լաւ է զետիս ապատոի, ինձ կուլ տայ, քանի իմանամ, թէ դունը պատոի, ինձ կուլ տայ, քանի իմանամ, թէ դունը մոոցեր ես.» արդեօք մոոցեր է նա խկանձ մոոցեր ես.» արդեօք մոոցեր է նա խկանձ կորիր, անհիմն կասկած, եթէ մինչև իսկ ինքը

Ըստ չհաւատամ, ալ ուր մնաց քո խարռուիկ յայսեր... բայց միթէ չզիտեր, որ սիրած սիրտ մը այսքան երկար բաժանումից կհալի, կմաշի, ի՞նչ պիտի ընէ քո փողը, քո արիւնոտ ոռկին: Արի, կեանքս, դու ինձ պէտք ես... քո կորիճ, արեափայլ դէմքին է կարօտ իմ մաշուած սրտիկը: Պիտի գան, չէ, պիտի գան...»:

Այն աստիճան յուզուած, երեակայութեան մէջ էր, որ իսկի չէր նկատում մօրը ներկայութիւնը. անուրջներու աշխարհն էր թուած: Մայրը, գանելով Սննիկին տեսակ մը մատզբաղ դըրութեան մէջ, սպասում էր հետեանքին:

— Ի՞նչ ունիս, աղջիկս, ո՞ր տեղդ կցաւի, որ գունատուած դողում ես, հարցուց վերջապէս:

Սննիկը չպատասխանեց:

— Քեզ հետ չեմ, ո՞ր տեղդ կցաւի, Սննիկ:

Սննիկը տեսնելով մօրը, կիսասթափուած.

— Մայրիկ, քիչ մը զլուխս ցաւում է, չգիտեմ ի՞նչից, ըստաւ.

— Ի հարկէ, եթէ այգքան մտածես, տանչուիս, զլուխդ չէ, բան մ'ալ աւելի կցաւի.

— Ո՞վ, թողունք այդ, արգէն անանկ էլ զլուխս ցաւում է:

— Հա, Սննիկս . . . լու խորհէ ու պատասխանէ. քեզ մտածմունքէ, զլխացաւէ ազատելու համար, որոշեցինք.... ամուսնացնել Յարութիւն աղայի մանչուն՝ Պետրոսին հետ: Լաւ տղայ է,

զլել և կարդալ ալ զիտէ, Խոկ, ով զիտէ, քո փեսացուն, Երբ կուզայ, զուցէ և չզայ . . .

— Ի՞նչ... Աստուած իմ, անկարելի է, երբէք, երբէք: Նա կուզայ, մնպատճառ կուզայ, բողոքեց խեղձը վճռական ձայնով:

— Դու ինձ ականջ ըրէ, մաքէդ կանցնես, որ ես իմ զաւակին վատ կկամենամ—պաղօրէն շարունակեց մայրը:

— Մայրիկ, մայրիկ, աւելի գերադասելի է ինձ համար գերեզմանի խորքում ննջել... քան Պետրոսին հետ կենակցել ու լքել իմ փեսացուն . . .

— Դու ջանիլ ես, խելքդ չկտրիր, հնազանդէ ծնողացդ: Ճիւան հասակ, առոյդ կազմուածք, հարսատութիւն... ալ ի՞նչ կուզես, խենթ:

Զուզեմ աշխարհի ոչ հարստութիւնը և ոչ զեղեցկութիւնը...: Կամ իմ Աշոտը և կամ մահ: զեղեցկութիւնը:

Այն տեսակ վճռական ձայնով մը խօսեց՝ որմէ լսում էր. թէ վիշտ, թէ անարգանք: Մայրը լոեց: Տիրեց բաւական ժամանակ լուսութիւն: Ոչ ոք չէր խօսում, ոչ ոք չէր ուզում այդ լըսութիւնը խզել: Սակայն մայրը այլ ևս չկրցաւ համբերել երկար, ընդհատելով լուսութիւնը և հակղիր զգացումներու լարուածքը խանզարելով. ըստաւ:

— Աիրելիս, արդէն քո դիմադրութիւնը աւելորդ է, ինչու որ մենք խօսք տուինք և այլ մենք կրնար մերժել....

— Դուք չեք կընար, ինձ իրաւունք կուտաք
մերժելու,

— Իմացողը ի՞նչ կըսէ . . . չպի՞ախ ըսեն, թէ
ի՞նչ անգատիւ աղջիկ է, որ ծնողաց խօսքին չէ
հնազանդում և սրա նման, ով զիտէ դեռ, ինչեր:

— Թող մարդիկ ինձ անպատիւ կոչեն, անհը-
նազանդ անուանեն, այլանեն, ես չեմ հնազան-
դիր, չէ, քանի այս սիրոս քովս է և չնչելէ
չեմ զրկուած . . .

Մայրը, տեսնելով աղջկայ անսպասելի դի-
մագրութիւնը, համարելով այդ տղայտկան տա-
քութիւն, որ շուտով կանցնի, կհամակերպի:
Արդէն վճռուած, վերջացած հարց մըն է, մը-
տածելով, դուրս կելէ, կզնայ նբա հօր սենեակը
ձեռք առնուելիք միջոցների մասին խորհրդակ-
ցելու,

Սննիկ, հոգեկան տանջանքի մէջ, վերջին
աստիճանի յուզուած, խելազարի մը նման քըմ-
ծիծաղ մը նետեց սենեակի դոան, ուրկէ կմեկ-
նէր մայրը՝ ու կայացուց իր այս վերջին որո-
ոշումն ու վճիռը, թէ. «Աւելի լաւ է զերեղմա-
նում հանգչել, քան չսիրածի հետ ապրել»:

Թ Ա. Փ Ա. Ռ Ա. Կ Ա. Ն Բ

Ը

Կար մօտաւորապէս երեք ամիս, որ Աշոտը
անգործ, անմիթար թափառում էր քաղաքէ
քաղաք՝ գործ և աշխատութիւն գանելու յու-
սով: Ամեն օր նոր յոյսերով, նոր յոյզերով մա-
քառում էր անողոք ճակատագրի դէմ: ապագայ
երազած կեանքի երջանկութենէն արբշիս, բայց
կարծես, ուր որ պիտի գնար, ուր որ պիտի դի-
մէր՝ իրան հետապնդող նոյն բաղզը գացած էր
արդէն, հետեապէս ամեն ջանք, ճիք ի զուր է-
ին և մնում էր միշտ անգործ, միշտ անօգնական:

Սյդ հալածեալի թշուառ գրութեան մէջ, ե-
թէ ունէր միթարութիւն մը, գա իրա նման
պանդուխտներու չարքաշ կեանքն էր: «Մենակ
ես չեմ, ինձ նմաններ շատ կտն» խորհելով, մը-
խեթարուում էր իսկապէս իրան նման թշուառ-
ներ թէպեակ շատ կային, որոնք ամենը առան-
ձին՝ մէկը միւսին յօյսոյ յենարաններ էին, բայց
իրականութեան մէջ բոլորն էլ թշուառ, բոլորն
էլ օգնութեան կարօտ էին:

Եթէ իր նմաններ ունէին առաւելութիւն
մը, համարեա, մեծամասնութեամբ իրանց կեան-
քը զեղխութեան և անբարոյականութեան մատ-

նուելն էր, որ բառի լայն իմաստով, Բաքոսի և ա-
ֆոնեան գիշերների երկրպագուներն էին դարձած
խսկական։ Լքած էին ամեն բան. օր մը կուշտ,
օր մը ահօթի, քարշ էին տալիս իրանց ցաւալի
գոյութիւնը, առանց գիտնալու, թէ ինչու կապ-
րին, ի՞նչ է կեանքը և ովքեր են իրանք։ Մոռ-
ցեր էին ամեն սրբութիւն, պատիւ Եթէ պէտք
ըլլար գժոխքում փայտի տեղ մարդ վառել, կա-
րելի է, թէ օգտակարութիւն կրնային ունենալ:
Այս էր շատ պանդուխտների անմիջակար, ցաւա-
լի պատկերը, ախուր իրականութիւնը։

Ինչպէս փայցածներու բնատուր է, առ հա-
սարակ, մարդ որսալ իրանց շրջանը լայնացնե-
լու, որպէս զի իրանց պակասները էնքան նկա-
տելի չըլլայ, հէնց այդ բաքոսային մթնոլսրտի
ինքնատուր ընդունակութեամբ, այս քանի ան-
գամ է, համոզում էին Աշոտին, որ իրանց օրի-
նակին հետեի, առարկելով, թէ. «Միենոյն է ար-
դէն, բաղդը չէ՝ ժապտում, բայց այսպէս գոնէ
մոռացութեան ենք տալիս մեր ամբաղդ կացու-
թիւնը, ձգէ թէ վայրկեաններ, բայց զգում ենք
երջանիկ», բայց միշտ էլ չէին կրցած համոզել.
որովհետեւ նա հայրենիքում «աէր» ունէր, որուն
շուտ տիրապետելու համար ուզում էր, գործ,
ջանք, աշխատանք, որպէս զի կարող ըլլար ժա-
մանակին մեկնել հայրենիք՝ խոստմնազանց չըլ-
լալու համար։

Եւ սակայն անողոք բաղդը այն աստիճանի
հետապնդում էր, որ նա երբեմն ուզում էր, իր լը-
պիրշ հայրենակիցներու օրինակին հետեի, գոնէ
պահ մը ներկան մոռացութեան տալու համար,
բայց... հինաւուրց կաղնիի հսկայ նայուածքը և
Աննիկի պաղատանքը՝ կասեցնում էին ու ջնջում
այդ յանցաւոր ցանկութիւնը։

Վաղը կիրակի էր. Աշոտը միտքը դրաւ ա-
ռաւօտ, կանուխ արշալոյին եկեղեցի գնալ, ա-
զօթել Մարիամ Աստուածածնի պատկերի առջե,
գուցէ զթութեան մայրը գար օգնութեան պան-
դիստին՝ հալ ու մաշ սիրահարին։ Զէ սը զթու-
թեան մայրը գերազոյն բարեաց զգացումներու
ամբողջութիւնն է։

Եւ դա հէք Աշոտի վերջի միակ յոյն էր և
ապաստանը, «Բոլոր անուանի բարերարներուն
զիմեցի ինձ զործ մը գտնալու համար, բոլոր բա-
րեկամներու խորհուրդներուն հետեւեցի, բոլոր
անծանօթներուն առաջարկեցի իմ ծառայութիւ-
նը, ամեն տեղ անօգնաւ, ամեն տեղ անգնիթ...
ի՞նչ ընեմ այլիս, որմէ զիմեմ։ Յուսալով, յու-
սալով նամակս ալ ուշացուցի։ Գրէի, գոնէ տնից,
հայրենիքից մի միախթարական խօսք կլսէի, հի-
մա ալ ի՞նչպէս զրեմ, ի՞նչ զրեմ։ Եթէ մի բանի
կոպէկ ըլլար, արդարանալով, ի՞նչ զրութեան մէջ
գտնուիլս կնկարագրէի, իսկ հիմա ի՞նչպէս ընեմ,
որմէ օգնութեան զիմեմ...։ Միթէ շատերի նման.

գեղսութեան մատնեմ ես ինձ, մոռնամ՝ հայրենիք, տուն, ծննդք, սիրական...։ Բայց ինչպէս կարելի է, քանի այս սիրտը հետո է, իմ կրծքի տակ... և կամ սիրտս հանեմ, նետեմ, փշում։ Ով Աստուած, Դու եկուր ինձ մխիթարել, օգնել, եթէ ոչ այս կեանքը անտանելի է, դժուար։ Քո ամենատես աչքի առջե անմեղ սրտումս սէրը բակսաւ գոյութիւն առնել, հիմա էլ Քու զիտութեամբն է, որ տանջում ես, չարչրկում, ինչու, չես զիտեր, որ մարդիկ անզօր են զիմանալու Քո ստեղծած տանջանքներին, չես զիտեր, որ Յովի երանելիների գարը անցեր է և մարդիկ այժմ աւելի մեղմացած, նրբացած աղերսում են Քեզանից աւելի խնամք, գութ, սէր։։ Այսպէս բողոքելով շարունակ Աստուծոյ և նախախնամութեան դէմ, այս ծանր մտատանջ յուղմունքների բեռան տակ ընկճուած և յոզնած, Աշոտի քունը տարաւ։

Դուրսը սառնամանիք էր։ Քամին փչում, ոռնում էր։ Նա ևս, կարծես, մարդկանց անարդարութեան դէմ բողոքելով ոռնալով փախչում էր հեռու, մարդկանցից հեռու... դէպի լեռ, աշատ դաշտ։

Առաւօտը շատ վաղ վեր կացաւ, շտապեց եկեղեցի։ Վերջի սև կապէկով գնեց մոմ մը, վառեց զթութեան մօր առջե և ծնկաչոք սկըսաւ աղօթել։ «Ով զու բարեկոյս որբունի, մայ-

րական բարեխնամ զգացումներով լի քո Աստուածապատութեան եմ զիմում, զթա, արի օգնութեան թշուառ հալածեալիս, փրկէ նրան կարիքի մահակուս ձիրաններից, Դու օգնող կարօտեալների, մայր որբերի, յոյս տառապեալների.. գերագոյն բարիքների։ Դու աւեսնում ես, թէ որ աստիճան հալածուած եմ, թշուառ, անմխիթար։ Հաւատա, Մայր Կոյս, իմ ինզրարկու ձայնով չէի երբէք քեզ ձանձրոյթ պատճառի, զիտեմ, շատեր կան ինձ պէս քեզանից օգնութիւն հայցող, զիտեմ, բայց ինչ արած, ուրիշ յոյս ապաստան չունիմ, բացի քու զիմանայց բարեխօսութենէն, զթա, ողորմէ։ Վերջի միակ սև զրտմովս, զիտես, որ մոմ մը գնեցի և վառում եմ քո պատկերի առջե և նրա բոցերի մէն մի ճարածափիւնը, վերջացնում է իմ յուսոյ կանթեղը ներշնչելով նոր հաւատք, նոր յոյս, թէ Աստուածորդուղ առջե լսելի պիտի ըլլայ իմ աղօթքը։

Այսպէս երկար՝ ծնկաչոք աղօթում էր Աշոտը։ Ոչ ոք նկատի չէր առած զարիպին։ Քրիստոնեայ հոծ ամբոխին մէջ նա որբ էր, բողորին անծանօթ։

Ծովու մահագուշակ ալիքներու դէմ յորձանք տալով, մարտնչող զինուորի մը յուսադրութեամբ, որ հեռաւօր անյայտութիւնից ըսպասում է իր փրկութիւն—ագատումը, նա յուսադրուած, դուրս ելաւ եկեղեցուց ու գնաց։ Գը-

նում էր, ինքն էլ չզիտէր ուր էր գնում և ինչու:

Հիմա կէս մը յուսադրուած, այլես գործի մասին չէր մտածում, կասկածում էր, որ մի գուցէ ժամանակին չվերադառնայ հայրենիք, խոստմնազանց ըլլայ, որու հետեանքը, իրաւ, աւելի ծանր, աւելի ամօթալի էր թւում: «Բայց ինչ ալ որ ըլլայ, անպատճառ կզնամ» մտածում էր, «խոստմնազանց շեմ գանուիր սիրուհու հանդէպ: Անօթի անվաստակ, բայց վերջապէս կզնամ. թնդ մարդիկ ինձ այպահնեն, թնդ մարդիկ իմ վրայ ծիծաղին, թող ինձ անընդունակ, տգէտ մէկը անուանեն, ես կզնամ, ես կզնամ և կըսեմ. ես եկայ, տեսնում ես, Անսիկ, հին, մաշուած, զգեսաներով, այլուած, տանջուած դէմքով, բայց միւնոյն անմեղ երիտասարդական վառ սիրով: Ամեն տանջանքների, հալածանքների տոկացի, դիմացայ, ով գիտէ, եթէ քիչ մըն ալ մնայի, գուցէ բաղդը ժպտար և ես աւելի յաղթապանձ վերադառնայի, բայց որովհետեւ քեզ սիրում եմ և որպէսզի խոստմնազանց չըլլայի քո առջն, յանձն առի իմ անձնասիրութեան վիրաւորանքները, և ամեն բան մէկդի դրած, եկայ քեզ փնտուելու և գտայ: Ներէ, ներէ ինձ, եթէ իմ յոյսերը չկտրողացայ իրագործել: Ես յանցանք չունեմ, անիծուի ու բաղդը, որ այդքան անողոքաբար հետապնդում էր ինձ: Այլես դու,

միակ դու ես իմ միախարութեան հրեշտակը, միակ դու կարող ես ինձ երջանկացնել, իմ կը բած, քաշած տանջանքներս թեթևացնել»:

«Քիչ ալ նշանակեալ օրուայ լրանալուն կըսպասեմ» միշտ խորհում էր, «հաւատով լի կկըռուիմ իմ ուժիցս բարձր ճակատագրի դէմ, եթէ ժպտայ երանի ինձ, իսկ եթէ ոչ, ես կգնամ, թնդ նա իմ սէրը մերժէ, իսկ ես չեմ կարող: Բնաւ, երբէք»:

Սյսպէս վճռում էր շարունակ, բաւական ժամանակ ևս տոկալ մաքառել, բայց ինչ ալ ըլլար, դնալ, գնալ, գնալ:

Թամին զագրած էր, ոգը խաղաղ՝ և Աշուը այդ մտածումներով գնում էր, ինքն ալ չզիտէր ուր:

Հ Ա Ր Ա Ա Ն Ի Ք Լ



Ծնազների յամառ կամքը յաղթած էր: Հարսանիքի պատրաստութիւն էին տեսնում: Ո՞չ Աննիկի աղիողորմ արտասուքները, ո՞չ բողոքները, ո՞չ յուսահատ սպասնալիքները և ո՞չ շատերի մտերմական խորհուրդները չէին կարողացել

խղճահարել տղէտ, յամառ ծնողաց քարասիրտ
անզթութիւնը: Որոշած, էին, հետեապէս, պէտք
էր իրագործել, ինչ գնով էլ ըլլար, քանիի ալ
նստէր:

Սակայն չնայելով, որ ծնողքը առանց իր
աղաջանքներուն, արտասունքներուն ուշադրու-
թիւն դարձնելու, հարսանեաց պատրաստութիւն
էին տեսնում, ինքը՝ Աննիկը, վճռում էր կրցա-
ծին չափ դիմագրել, կրցածին չափ կռուիլ:
Նա գեռ յոյսով էր, որ Աշոտը անպատճառ կո-
գայ: Օրը լրանում է, ոհն, ինչպէս կարելի է սի-
րել անկեղծ, մաքուր սիրով, երկար սպասել սի-
րոյ գալստեան, և վերջը լքել, ուրիշի յանձնը-
ուիլ: Բնաւ, երբէք: Մեր հայ ցեղի տոհմային
ազնուութեան մէջ զըսւած բան մը չէ սա-
ես աւելի շուտ կհաշտուիմ ոչնչանալու,
մեռնելու, քան լրելու իմ սէրը: Գոնէ կիմանան
մարդիկ, թէ ինչպէս հայ գեղջկունին էլ կարող
է իր սիրոյն գոհուել, մեռնել: Եւ այն ժամանակ
իմ Աշոտը չխնայէր սև հօղակոյտս սիրել, ուխ-
տի գալ, համբուրել անվերջ, յաւիտեան և ես
գէթ երջանիկ, կըլլամ յաւիտենականութեան
գրկում:

Այդ կիրակի հարսանիքը պիտի կտարուէր,
որովհետեւ ծնողքը ամեն պատրաստութիւն տե-
սած էին, ուստի վճռում էր մինչև կիրակի ըս-
պասել, զուցէ զայ, իսկ եթէ չդայ, կամ փախ-

չիւ, հեռանալ հայրենի անից և կամ ցուրտ դի-
ակը յանձնել անզութ ծնողաց:

Իրենց գիւղի գեղատան ծառայողներու մի-
ջոցաւ շատ գժուարութեամբ կրցաւ, թոյն ձեռք
բերել: Այլիս անձնասպանութեան, թունաւոր-
ման մտքի հետ հաշտուած էր: Քանի անզամ
ուզում էր խմել, գնում էր Աշոտենց, վերջին
հրաժեշտը տալու, համբուրելու հինաւուրց կաղ-
նին և հոն խակ խմելու, բայց մի անյայտ ոյժ,
չգիտէր ուրից, բռնում էր ձեռքը, չէր կարո-
ղանում: Քանի անզամ մահը մօտից ճանաչեց
բայց չէր յանզնում: Քսան տարուայ գարուն
հասակի մէջ կեանքը գեռ անոյշ էր, հրապուրիչ:
«Ախ, եթէ անզամ մըն էլ տեսնայի Աշոտիս,
այն ժամանակ հեշտ էր», խրախուսուելով միշտ
յետաձգում էր: Սակայն առաջի անզամուայ նը-
ման սոսկալի չէր թւում այժմս և եթէ հիմա
խակ չէր իրագործում, վախը կեանքից զրկուիլը
չէր, հասպա անզամ մըն էլ Աշոտին տեսնելու
փափազը, սրտի պահանջը:

«Ահա, ուր որ է կուգայ», գաղտնի ձայն
մը ասում էր ներսէն, «սակայն ուր է, ինչու
չի դալիս անզութը»:

Վերջին անզամ ըլլալով, գաղանի գնաց Ա-
շոտենց, որովհետեւ ծնողքը արգելած էին այլս
յաճախել նրանց, զնաց վերջին մնաք բարեաւը
ըսկու և իմանալու, նամակ կամ մի որ և իցէ

տեղեկութիւն չկայ:

Սովորականի նման մտածկոտ, տխուը գը-
րութեան մէջ գտաւ. Աշոտի ծնողաց, որք տան-
ջալից հարցերու ճնշման տակ ընկճռւած, մտա-
խոն դիտում էին հեռաւոր անյայտութիւնը, ուր
միկնած էր որդին և ուրկէ պիտի վերադառ-
նար:

Աննիկի անսպասելի զալը աննկարազրելի-
ուրախութիւն պատճառեց թշուառ ծնողաց: Պահ
մը իրանց հարազատին տեսածին նման հրճուած,
դիտում էին, զի շատոնց տեսած չէին ապագայ
հարսնացուին, որդւայ սիրականին, որ խում յա-
փշտակում էին իրանցից:

— Որդեակ, ի՞նչ պատասխան պիտի տամ զաւ-
կիս, եթէ չկարողացայ քո սէրը վառ պահել, քեզ
յափշտակողներու, խլողներու ձեռքէն փրկել, ա-
զատել, Աննիկի այտերը շոյելով, մելամաղձ ձայ-
նով մը հարցուց Խաթունը:

— Որդէն պատասխանը ես ինքս պիտի տամ,
դու անհոգ կաց, մայրիկ, շուտափոյթ պատաս-
խանեց Աննիկը:

— Նամական:

— Ոչ, փաստացի հաստատելով, որ սիրում էի
անկեղծ, մաքուը սիրով . . . :

— Ի՞նչպէս:

— Կիմանաք, հիմա վաղ է ըսել . . . :

— Բայց չէ որ այս կիրակի հարսանեաց պը-

սակաղբութիւնը պիտի կատարուի... անկէ վերջ
այլես ինչով կարող ես հաստատել, որ սիրում
էիր իմ զաւկին:

— Բաւ է, մայրիկ, անանկ ալ վիրաւոր սիրտս
մի խռովիքը, ըսի և կկատարեմ. այն ժամանակ
կհասկանաք հայ գեղջկուհու սիրու զօրութիւնը,
զգացմունքի ոյժը . . . :

Խեղճ կինը ոչինչ չէր հասկանում տեղի ու-
նեցած խօսակցութիւնից, ուստի աւելի պարզ և
որոշ հասկանալու համար հարցուց.

— Ի՞նչ պատասխան պիտի տամ զաւկիս, որ-
դեակի, երբ վերադառնայ քեզ գտնելու յոյսով:

— Ելսես կսիրէր և պիտի սիրէ յաւիտեան...

— Խօսքով . . . :

— Ո՛չ, զգացմանքով. ես այժմ եկայ վերջին
հրաժեշտ տալու և ինզրուելու քեզանից, որ երբ
գայ, ըսես՝ թէ հանգիստ խղճով նրա սիրոյն զոհ
եղայ . . . :

— Ի՞նչպէս, ինչ ըսել կուզես, լաւ բացարէ,
որ հասկնամ:

Այսչափն էլ բաւական է, վերջը կիմանաս,
միայն աղաչում, պաղատում եմ, երբ գայ, ըսել,
որ սիրու զոհ եմ... սրտիս ողջակեզ....

Տիրեց խոր, գերեզմանային լռութիւն. եր-
կուսն էլ լրած էին. իսկ ծերուկը դիտում էր
գեռ հեռաւոր հորիզոնները:

Երկինքը թուխալ, թանձը ամպերով ծածկը-

ուած էր. երկի, կրկին պատրաստւում էր լալու։
Ոչ ոք չէր խօսում, ոչ ոք չէր ուզում խորհր-
դաւոր լոռութեան թախծաղարար ազգեցութիւնը
խոռվելու։

Արտասուքը աչերին, որդւոյ կարօտի փո-
խան, համբոյր մը դրոշմելով Աննիկի ճակատին,
Խաթունը ընկճուած, պաղատագին ձայնով ըստաւ.

—Եթէ իմ զաւակս է, եթէ իմ կաթով մնած,
մեծցուցած գառնուկն է՝ նա կուգայ, վաղ թհ
ուշ նա կուգայ։ Նրա սրտում անկարելի է, որ
մարին, մոռացուին անկեղծ սիրոյ բոցերը։ Երբ
նա գայ, ինչ պիտի ընէմ . . . ինչ պիտի ը-
սեմ . . . Տէ՛ր Աստուած։

—Պատասխանը ես կուտամ, ըսելով, Աննիկը
համբուրեց դողդոջ ձեռքը մայրիկին և զնաց ա-
ռանց յետին նայելու, առանց ուշադրութիւն
գարձնելու մօր աղաչանաց, որ կանչում էր. «Նտ
կուգայ, սպասէ, անպատճառ նա կուգայ, կուգայ։

Ահա, տես, տես խաթուն, մեր ցաւերի, վշտե-
րի ծանրութիւնից յոգնած երկինքը, նորից լալիս
է, կիսաձայն նկատեց ծերուկը։

Տեղատարտի անձեւ էր դալիս։

ՎԵՐԱԴԱՐՁԸ



Անցեր էին ամիսներ նոր յոյսերով, նոր
յոյզերով, իսկ անողոք բաղդը դեռ չէր ժպտում
մեր Աշոտին։

Գժուար էր, շատ դժուար այժմ։ Պարտուած,
յուսախաբ վերադառնալ հայրենի տուն, երբէք
այդ մտքի հետ հաշտուել չէր կարողանում, ա-
ւելի զերադասում էր սկանդիստութեան դաժան
կեանքում տանջուիլ, քան էղալէս յուսախաբ, դլ-
խիկոր վերադառնալ հայրենիք. բայց այնտեղ
«Նա» կար, առանց որու ապրելը անկարելի էր։
«Եթէ տոկում եմ, խորհում էր, այս դառնա-
կակիծ կեանքին, լոկ իմ նուիրուած նպատակս
իրագործելու, նրան գտնալու համար է, իսկ ե-
թէ պիտի զըկուիմ նրանից և կամ մոռացուիմ,
աւելի լաւ չէ որ աժմեանից մարդկանց ծաղր
ըլլամ, հեգնանքի առարկայ։»

«Այո, այո պէտք է, անհրաժեշտ է պար-
տուած, յաղթուած դրութեամբ իսկ վերադառ-
նալ հայրենիք, գտնել նրան, եթէ փնտում սի-
րում էի։»

Այսպէս բաւական ժամանակ ինքն իր մէջ

կոռւելուց վերջ՝ վերադառնալու մտքի հետ հաշտուաւ։ Սակայն որպէսզի բոլորովին ծաղրալի չըլլայ, կամաց-կամաց իր սրտակից ընկերներին իր նապատակը սկսաւ բացատրել. ոմանց իրքեւ խորհուրդ հարցուցածի պէս, միւսներին, իրքեւ իրա որոշումը։ Եւ այդպէս մօտ ժամանակուայ մէջ այլևս բոլորին յայտնի եղաւ, որ Աշոտը մըտադրութիւն ունի վերադառնալ հայրենիք։

Ոմանք խրախուսում եւ երանի էին տալիս, որ պիտի վերադառնայ հայրենիք, միւսները՝ ծիծաղում էին վրան, որ անվաստակ է վերադառնում, բայց Աշոտի համար ոչ այդպէս և ոչ էլ այնպէս նշանակութիւն ունէր, նա մի միայն ուղում էր, որ իմանային իր մեկնելը, թէկուզ հէնց ծիծաղէին իր վրայ. հերիք է, որ ինքը աւելի սիրտ առած, ամբուղնուած կզնուր։

Երբ արգէն բոլորը իմացած՝ հարցնում էին. Երբ, որ օր մեկնիլը, վերադառնալու ամեն նախապատրաստութիւն տեսած, որոշեց. առաւօտ իսկ հրաժեշտ տալ անծանօթ քաղքին։ Հիմա այդ քաղաքը թւում էր իրան մի սարսափելի վիշապ, մի սոսկալի գագան, որ ուզում է լափել, կլանել, կլանել բոլորովին։ «Ի՞նչպէս կարող են մարդիկ այս անիծուած քաղաքում ապրել», մտածում էր նա, չնայելով որ հէնց ինքն էլ այդ քաղքում անցուցեր էր պանդիտութեան կեանքի երազատենչ օրերից ամիսներ ու ամիսներ. . . .

Եւ որովհետեւ վճռած էր վաղն իսկ մեկնիլ՝ այդ երեկոյ հրաւիրեց պանդուխտ հայրենակիցներին, խապրիկներ հաւաքելու, տանելու իր հետ հայրենիք. կարծես, ինքը աեսակ մը ոյժ առուծ, ուզում էր իր համագիւղացիներին իրանց ունեցած սիսաները, զգացած մեղսանքը յայտնել։

Երեկոյեան իրա համագիւղացիներ, համարեա, բոլորն էլ եկած էին իրանց կեանքից տեղեկութիւններ, նամակներ, բարեհներ զրկելու իրանց էութեան մաս կազմող՝ անցեց, ծնողաց։

Աշոտը, տեսակ մը արհամարհանքով լսում էր. թէ ինչպէս ամենն էլ սառւմ են իրանց կեանքը, կենցաղը՝ իսկական զրախտային նկարագրելով. Մտիկ էր տալիս պժգանքով թէ ինչպէս զրախտային էին նկարագրում իրանց դժոխային աշխատանքը. չէ որ ինքը շատ լսւ դիտէր, շատ մօտիկից ծանօթ էր նրանց կեանքին. Ուզում էր նրանց դէմքին իսկ պոռալ. թէ դուք ստում էք, խաբում էք, անիրաւններ, գուք իսկական անբաղդ թշուառներ էք և սակայն ուզում էք, որ ես ձերոնց ձեր կենցաղը նկարագրեմ զրախտային, արքայական, չէ, ատիկա ես չեմ կարող, ես չեմ կարող երբէք ստել իրականութիւնը. բայց զսպում էր ինքն իրան, և լսում էր, մտածելով, որ արգէն անանկ էլ նրանց ծաղրի առարկան է, հիմա բոլորովին խայտառուկ կըլլայ. Ո՞ր ճշմարտախօսը իր արդար պատիմը

կրած չէ, կամ արհամարհանքի և կամ մութ բանդի խորքերում։

Կռած մտիկ ըրաւ յակամայից երկար։ Այդ բովէին դրանց բոլորին ատում էր, արհամարհում էր, որ լոկ եսասիրութեան մը համար կեղծում էին, աղաւաղում անմիիթար իրականութիւնը։ Եւ ինքնին սոսկալով մտածեց. եթէ սրանք աւելի բարձր դիրքի տէր ըլլային, ով դիտէ ինչեր չէին ըներ փառքի համար։

Համագիւղացիները գնացին. Ինքը մնաց մենակ իր մտածումներու և սրաի դալկութեան հետ «Արդեօք սրանց նմաններու բննած սխալ, անաքադ ընթացքի հետեանքը չէ, որ ես և, ով դիտէ, զեռ ինձ նման քանիներ դիմած են դարիսպութեան։

Ի՞նչու համար իրականութիւնը տրանալր ճշմարիտը կեղծել, չէ՞ որ դուք տանջւում էք, չարչարւում չորքուտանի կենդանիներից տասնապատիկ աւելի սոսկալի Դուք բարոյապէս փշանում, կորչում էք բոլորովին, ինչու համար ձեր սնափառութեամբ պատճառ էք դառնում, որ ուրիշներն էլ փշանան, կորչեն. Ի՞նչ արժէ ձեզ ճշմարտութիւնը չպարզէլ

Սակայն պիտի հաւատան արդեօք, եթէ եւ գնամ և իրականութիւնը պատմեմ. թէ օտարութիւնը դաժան է, կործանարար է, հալածանք էր կեցէք տեղերնիդ և հայրենիքը հիմքից բարենու-

բովելու աշխատեցէք։

Զպիտի հաւատան՝ վշտաբեկ մաքից անցուցութիւննետե, ով որ գալիս է, այլիս իր ես-ին խաբուսիկ պատւոյն համար, ստիպուած է լինում վարակուած մթնոլորտի ազգեցութեան տակ գործել։ Այլիս ով կհաւատայ մէկ անվաստակ, անընդունակ, տգէա վերադարձողին, երբ անդին, անազին վոհմակ մը ուրիշ տեսակ է պատմում։ Բանք, որ արար աշխարհի կեանքումն էլ ճշմարտութիւնը յաղթած է ստին։ Ո՞չ, ո՞չ։ Եւ նայսպիսի անվիջանալի մտածումներու ազգեցութիւնից յոդնած՝ քնացաւ։

Գիշերը պարզ էր։ Զինջ, կապոյտ երկնակամարի վրայ թագուհի լուսինը՝ իր նազելի նայուածքը աշխարհին դարցուցած, հազար նազանքով պտառում էր. և նրա արծաթ ցոլքերում գիշերային կենդանութեան հիւլէն էր պսպում։

Աշոտի երկու ընկերները, որոնք անկեղծ յարգում էին նրան, առաւօտ կանուխ եկած էին ճանապարհ զնելու, իսկ միւսները՝ եթէ կարելի է նրանց էլ ընկեր անուանել—չէին եկած, ժամանակ չունենալին առարկելով, որովհետեւ հայրենիք, դէպի գիւղ վերադարձողը աղքատ էր և գուցէ շատերին ծաղրալի։

Շտապով հասան կայարան։ Քանի մը վալրկեանից շոգեկառքը պիտի մեկնէր։

Երբ շոգեկառքի զանգակի երկրորդ ձայնը

հնչեց, բաժանման ըոսէին լոռող ընկերները յուղուած լալագին ըսին. «Երթաս բարեաւ, ընկեր, գնա, անվտանգ հասիր հայրենիք և պատմէ մեր դառն կեանքի իսկութիւնը. Հռն, զուլումի երկրում, չըլլայ թէ հրապուրուին շատերի անհիմն պատմածքներից..Երթաս բարեաւ...»: Շոգեկառաքը շարժուեց:

Սնշարժ կայնած երկու յուղուած սրտեր, արտասուաթոր աշերօք, գիտում էին կայրանից գնացքը շոգեկառքի. որ աանում էր երջանիկ թէ անբաղդ վերադարձող մը դէպ հայրենիք երկու օր վերջը Աշոտը անցնում էր սահմանը. զգալով անհուն ուրախութիւն և չհաւատալով, որ մօտ օրից պիտի տեսնայ իր սրտի տիրողին — Աննիկին:

Ո՞հ, որքան երջանիկ էր այժմ Աշոտը. նա մինչև իսկ մոռցեր էր, որ պարտուած է վերադառնում: Այժմս լոկ հանդիպման ըոտէն էր երեակայում, թէ ի՞նչպէս ծնողքները պիտի ուրախանան, թէ ի՞նչպէս Աննիկը պիտի հրճուի... պիտի ժպանայ . . . ու բնաւ իսկ չէր մտածում, որ գընում է յոգնած, մաշուած, յուսախանր....»

Արդէն բաւական անցած էր սահմանը, երբ սկսաւ նկատել իր մեկնած ժամանակուայ շէն, ծաղկեալ զիւղերու աւերակ, փլատակ ամայութիւնը . . . ի՞նչո՞վ բացատրել...: Արանք հայու

զիւղեր էին, այո՛, ինքը շատ լաւ յիշում է . . . Զըլլայ թէ յանկարծ այս զիւղերու բնակիչներն ալ մեզ նման վաշխառուների, բռնակալների զուլումէն ծծուած, քամուած օտարութեան դիմելու հիւանդութիւից վարակուած ըլլան և ինքնին յիշշեց Խաչիկի խօսքերը, որ մեկնած ժամանակնին պնդում էր թէ . «Մենք պարտուած խոյս ենք տալիս, փախչում, ասպարէզը թողնելով մեր թշնամեաց, իրանց կամքի համաձայն ազատ գործելու, անվախ իշխելու»: Որքան իրաւոնք ունէր... և իսկապէս, սա չէ մեթէ կենդանի ապացոյցը մեր անվերջ սխալներուն...: «Աւաղ, որքան անոելի կորուստ է տուեր մեր հայրենիքն, մեր երկիրը՝ մեր իսկ ձեռքով, մեր իսկ գործքով աւերուելով։ Գնում ենք, հեռանում, փոխանակ մեր պապենական օճախը վառ պահելու, երբ նա առանց մեզ մարում է, փշանում, ոչնչանում... Հոս արիւն, արցանք, զուլում... Հռն, հալածանք, վիշտ, տանջանք»: Եւ այսպէս, Աշոտը ինքն իրա զգացումներու հետ խօսելով, գնում էր. և այսպէս, ամեն մի փլատակ շէնքի աւերակ, մոխրակոյտի տեսքը զարթեցնում էր նրա սրտում և թափիծ վիշտ, և վրէժ, և բողոք...»

Աւերակների մոխրակոյտների միջից անցնելով, մօտենում էր հայրենի տան...: Անա, արգէն երեսում են հայրենի լեռները, կտուրը, կամարը: «Ի՞նչո՞ւ սիրտս բարախում է, դողում . . .

Արիացիք, ոյժ աս, Աշոտ, դիմացիք այս հոգետանջ ըռպէին ալ, որ իրաւունք ունենաս վշտաբեկ ազգի մը կտրիճ զաւակը կոչուելու... առաջին անգամ մըն է տեսնում ես այս վիթխարի լեռները, հսկայ քարերը, ու դող ես ենում. սիրտս, սրանք քեզ հարազատ են, քու սեփականը».—Խըրախուսում էր ինքն իրան:

Հեռուսում, իրանց գիւղի կողմը, նկատեց որ երկինքը շատ ամպած է: Ահա, մշուշի միջից նըկատեց և կայծ մը՝ տեղատարափ անձրեի հետ: «Երկինքը շանթ ու կրակ է արձակում մեր գիւղի գլխին...: Ահա, կրկին ամպը գոռաց և կրկին լուսաւոր կայծ մը: Կերեի երկինքն էլ է բարկացած մարդկանց անիրաւութիւնների վրայ, որ սարսեցնելու, պատժելու համար այդքան սոսկալի շանթ ու կրակ, կայծ ու մրրիկ է թափում»:

Այդ բոլորը շատ գէշ ազգեցին Աշոտին վրայ: Դրա մէջ նա գուշակում էր մի ինչ որ սատանայական խաղ, չարազոյն խորհուրդ: Առաջ, որ մինակ սիրտն էր գողում, հիմա սկսու ամբողջ մարմնով դողալ, սարսուռ զգալ: Արագացուց քալուածքը՝ դուրսը չգիշերելու համար. որովհետեւ արել արդէն պահուած էր հսկայ լեռների քամակում:

Արդէն իրանց գիւղումն էր: Քիչ վերջը և նկատեց իրանց տունը: Գիւղի ներսերից լուսում էր, տափուլ գուռնայի մը ձայն, և ուր որ է հար-

սանիք կայ, մտածելով, աւելի արագացուց գնացքը:

Մի միայն վշտատանջ արեելցուն ինքնատուր է գուլումի մէջ պարել... երգել... և հրճուանքի ժամանակ՝ լալ....

Աշոտը մի ինչ որ անբացատրելի վախ, սոսկում զզաց: Ամպը այլիս չէր գոռում: Բնութիւնը իր բարկութեան մաղձը թափելէն վերջ՝ խաղաղած էր: Երկնքում նշմարւում էին կապոյտ կէտեր, գծեր:

Հասաւ տուն, բայց չէր յանդկնում ներս մանել: Ուզում էր, որ առաջ իրան տեսնային: Երկու վայրկեան սպասելէ վերջ՝ վճռեց մտնալ: Կամաց մը յանցաւորի նման ներս մտաւ: Տափուլ գուռնայի ձայնը աւելի ուժգին լուսում էր: Հազիւ սենեակի գոան մօտեցած էր, խաթունը նկատեց:

—Ո՞հ, Աշոտս եկաւ . . . եկաւ . . . ըսեն և գեռ զգին չփաթթուծ՝ իյնալը մէկ եղաւ:

— Մայրիկ, վեր կաց, ես Աշոտն եմ, եկայ.... եկաւ ըսելով, ուզեց բարձրացնել, երբ մայրը

— Աննիկը . . . հարաանիք . . . խլեցին, ըսելով, գեռ խօսքը չաւարտած՝ դարձեալ ընկաւ:

— Ի՞նչ, միթէ այդ հարաանիքը իմ Աննիկի հարսանիքն է, իմ կեանքի.... իմ հոգու . . .

Ո՞հ, դա անկարելի բան է . . . դա ընդունուած բան մը չէ. դա անգթութիւն է, դա անգթութիւն

Է...: Դուրս վագեց: Մի քանի բոպէ ինչ ընելը
չգիտնալով, խելագարի նման նայում էր ու
մըմնջում:

«Ես կզնամ... հիմա, այս բոպէիս, ես կվա-
զեմ, կզնամ, կըսեմ սա իմս է, իսկ ես նրանն եմ.
ինչ էք անում.. ինչու խլում, յափշտակում էք:
Հարցուցի՞ք իրան, կամքը առի՞ք: Ո՞վ իրաւունք
ունի մեզ բաժնել..... Գացած էի, տեսնում էք.
եկայ»: Առանց երկար մտածելու, զլխարաց վա-
գեց՝ թողնելով ուշաթափուած մօրը և հե ի հե
եկեղեցին ներս մտաւ:

Չնայելով, որ սկսուած էր պսակագրութեան-
արարողութիւնը, Աշոտի երենան բոլորի ուշա-
գրութիւնը գրաւեց: Ո՞վ էր, չէին ճանաչում:
Նայեց և Աննիկը: Նրան կարծիս սպասում էր:
«Ո՞հ, նա է, Աշոտս, եկաւ . . . եկաւ... վա-
փագն առի, անգամ մըն ալ տեսայ արեափայլ
դէմքը... հիմա հանգիստ և գոհ սրտով կմեռնիմ»,
Հաղիւ նկատելի այլոց, ո՞ի ինչ որ խմեց՝ երկու
կարօտատենչ հայեացքների ելեքտրական ուժից
ազդուած: Դա նկատեց Աշոտը, բայց ուշ էր:
Փոքր իրարանցումէ վերջ՝ Տէր-հալը գեռ չա-
ւարտած. «Պէս, պէս փորձութիւննէր, տան-
ջանքներ, խօսքերը... ընկաւ Աննիկը, «Աշոտս
կանչելով:

Օգնութիւնը անօգուտ էր:

Աննիկը, գոհունակութեան ծիծաղ մը դէմ-

քին, պաղ աշերը յառած, դիտում էր Աշոտին,
որը, գեռ տաք դիակի առաջ ծունկ չոքած, լա-
լիս, յուսահատ աղերսում, աշխատում էր ուշքի
բերել

Բայց Աննիկը մեռած էր:



Ապահով է այսուհետ հայոց ազգական պատմութեան աշխարհագիտական համակարգը և առաջարկ է այս պատմութեան աշխարհագիտական համակարգը առաջարկ է այս պատմութեան աշխարհագիտական համակարգը առաջարկ է այս պատմութեան աշխարհագիտական համակարգը

Ապահով է այսուհետ հայոց ազգական պատմութեան աշխարհագիտական համակարգը և առաջարկ է այս պատմութեան աշխարհագիտական համակարգը առաջարկ է այս պատմութեան աշխարհագիտական համակարգը առաջարկ է այս պատմութեան աշխարհագիտական համակարգը



ՀՀ Ազգային գրադարան



ԱՆ ՀՀ ԳՀ 464

33294

12-143

24291



ԳԻՒՆ Ե 30 Կ. •